

ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2011/2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	4
Կրթական գործունեություն.....	6
Գիտահետազոտական գործունեություն	24
Գիտական գրադարան.....	28
Հրատարակչական և տպագրական գործունեություն	33
Միջազգային համագործակցություն	37
Հանրային կապեր և տեղեկատվական համակարգեր.....	41
Աշխատանք ուսանողների և շրջանավարտների հետ	50
Սոցիալական քաղաքականություն.....	59
Տնտեսական գործունեություն	61
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ	62
Հավելված 1.....	70
Հավելված 2.....	79

ԵՊՀ խորհրդի մեծարգո՝ նախագահ:

Խորհրդի հարգարժան անդամներ:

2011/2012 ուսումնական տարում Երևանի պետական համալսարանի գործունեությունը ծավալվել է ԵՊՀ զարգացման 2010-2014 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանին համապատասխան: Զգալի աշխատանք է կատարվել ուսումնական գործընթացի կատարելագործման, կրթության որակի ներքին ապահովման համակարգի ստեղծման, համակարգային փոփոխությունների, ուսուցման տեխնոլոգիական հենքի զարգացման և նորացման, գիտահետազոտական գործունեության ընդլայնման և այլ ուղղություններով: Իրականացվել են կրթության կազմակերպման աշխատանքների բարելավման և մեթոդների նորացման, կրթության բովանդակության հարստացման և որակի բարձրացման, միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցման ուղղությամբ մի շարք գործընթացներ:

Արդյունավետ է եղել նաև համալսարանի գիտական կյանքը: Իրականացվել են բազմաթիվ ծրագրեր, մեկնարկել են նորերը, ձեռք են բերվել մի շարք դրամաշնորհներ, որոնց շրջանակներում ծավալվող գիտահետազոտական աշխատանքներին մասնակցել են բազմաթիվ դասախոսներ, գիտաշխատողներ, ասպիրանտներ, ինչպես նաև ուսանողներ: Արդյունավետ գործունեություն է ծավալվել հրատարակչական ոլորտում: Տպագրվել են ֆակուլտետներից հրատարակության երաշխավորված և հրատարակչական խորհրդով հաստատված բազմաթիվ գրքեր՝ ուսումնասիրություններ, դասագրքեր, մենագրություններ և այլն: Կանոնավոր պարբերականությամբ տպագրվել են գիտական հանդեսները:

Հաշվետու ուսումնական տարում ԵՊՀ-ն շարունակել է համագործակցությունը աշխարհի տասնյակ գիտակրթական ու մշակութային կենտրոնների հետ, կնքել համագործակցության նոր պայմանագրեր: Իրականացվել են համատեղ կրթական, գիտական, մշակութային ծրագրեր ու միջոցառումներ, դասախոսների և ուսանողների փոխանակության, տարաբնույթ միջոցառումների անցկացման, թեմատիկ աշխատանքների կազմակերպման մի շարք ծրագրեր: Այս առումով մասնավորապես նշենք

մեր հանրապետության կրթական համակարգում աննախադեպ մի իրողության մասին: 2011/2012 ուստարում մի քանի մասնագիտացումներով ԵՊՀ-ն ունեցավ կրկնակի դիպլոմով շրջանավարտներ՝ ԱՊՀ երկրների ցանցային համալսարանի շրջանակներում Ժողովուրդների բարեկամության ռուսական համալսարանի և Գերմանիայի Ռոստոկի համալսարանի հետ համագործակցության արդյունքում:

Անցած ուստարում շարունակվել է համագործակցությունը Հայաստանում գործող կրթական միջազգային կազմակերպությունների հետ, կազմակերպվել են հանդիպումներ Հայաստանում հավատարմագրված դեսպանների հետ, ԵՊՀ են այցելել մեր երկիր ժամանած օտարերկրյա բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ, դիվանագիտական կենտրոնների ներկայացուցիչներ, մշակութային և հասարակական-քաղաքական գործիչներ:

Հաշվետու ժամանակաշրջանում հետևողական աշխատանքներ են իրականացվել նաև տնտեսական և ենթակառուցվածքների զարգացման ոլորտում: Բարեկարգման ու վերանորոգման աշխատանքներ են կատարվել վարչական և ուսումնական մասնաշենքերում, ուսումնաարտադրական և հանգստի բազաներում, միջոցառումներ են ձեռնարկվել նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ, ձեռք են բերվել ժամանակակից սարքավորումներ, բարելավվել են ներքին տեղեկատվական ցանցի աշխատանքները:

Համալսարանական բոլոր գործընթացներում առանձնակի ակտիվություն են ցուցաբերել ուսանողական կազմակերպությունները:

Զգալի աշխատանք է կատարվել նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում:

Իսկ հիմա ըստ ոլորտների և ավելի հանգամանորեն ներկայացնենք Երևանի պետական համալսարանի գործունեությունը 2011/2012 ուսումնական տարում:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ուսումնական տարում համալսարանում կրթական գործընթացը կազմակերպվել է՝ ելնելով ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված համապատասխան խնդիրներից ու նպատակներից: Մասնավորապես՝ շարունակվել են աշխատանքները ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի կազմակերպման ու պլանավորման կատարելագործման, եվրոպական չափորոշիչներին համահունչ որակի ներքին ապահովման համակարգի ստեղծման, բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում կրեդիտային համակարգի իրականացման, դասավանդման և ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացների բարելավման և մի շարք այլ ուղղություններով:

1. Կրեդիտային համակարգ

ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի «Բարձրորակ կրթություն» ռազմավարական նպատակի իրագործման համար առաջադրված խնդիրներից մեկը համալսարանի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում կրեդիտային համակարգի ընդլայնված կիրառությունն ապահովելն է:

ԵՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների ուսումնառության կազմակերպման համար լրամշակվել և հրատարակվել են միասնական ֆակուլտետային «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» տեղեկատվական փաթեթները և դրանց խտասկավառակները, որոնք պարունակում են ուսանողների համար անհրաժեշտ տեղեկատվությունը իրենց ուսումնառությունը կրեդիտային համակարգով կազմակերպելու համար:

Տպագրվել և 2011/2012 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտներին են տրամադրվել համաեվրոպական ձևաչափի դիպլոմի երկլեզու (հայերեն և անգլերեն) հավելվածները առկա և հեռակա ուսուցման կրթական ծրագրերի համար:

2. Որակի ապահովում

Համալսարանում զգալի աշխատանք է իրականացվել կրթության որակի բարելավման ասպարեզում, որը ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական հիմնական նպատակներից մեկն է:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են ԵՊՀ-ում որակի ապահովման ներքին մեխանիզմների ներդրման և որակի շարունակական բարելավման գործընթացները: Այդ ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել համալսարանական կրթության զարգացման բաժինը, որն անցած ուսումնական տարվա ավարտին վերակազմավորվել է որակի ապահովման կենտրոնի, և ուսումնամեթոդական վարչության՝ համալսարանական կրթության որակի ապահովման և վերահսկման բաժինը, որը վերակազմավորվել է որպես ուսումնական գործընթացի վերահսկման բաժին:

Ստեղծվել են ԵՊՀ որակի ներքին ապահովման ինստիտուցիոնալ կառույցներ՝ ԵՊՀ որակի ապահովման կենտրոնը, ԵՊՀ գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովը, ֆակուլտետային գիտական խորհուրդների որակի ապահովման հանձնաժողովները (որտեղ ընդգրկված են նաև ուսանողների ներկայացուցիչները), որոնք կոչված են համալսարանում որակի ապահովման գործընթացներն արդյունավետ իրականացնելու: Այս ասպարեզում հիմնական խնդիրը պետք է լինի այդ կառուցվածքների փոխկապակցված աշխատանքը համալսարանի ղեկավարության և ֆակուլտետների, ամբիոնների, ինչպես նաև ուսանողական կառույցների հետ:

Մշակվել և գիտխորհրդի կողմից հաստատվել են այս կառույցներին վերաբերող համապատասխան կանոնադրական և այլ հայեցակարգային փաստաթղթերը, մասնավորապես՝ մշակվել է ԵՊՀ որակի ապահովման հայեցակարգը, որը հաստատվել է այս ուստարվա սկզբին:

Համաձայն ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանի՝ հաշվետու ուստարում իրականացվել են մի շարք գործողություններ: Մասնավորապես՝ ԵՊՀ ֆակուլտետներում ստեղծված աշխատանքային խմբերը, համալսարանական կրթության զարգացման բաժնի աջակցությամբ, մշակել են կրթական վերջնարդյունքների վրա հիմնված ուսումնական ծրագրերի մասնագրերը (սպեցիֆիկացիաները) բակալավրիատի 54 և մագիստրատուրայի 120

կրթական ծրագրերի համար: Դրանցում ներկայացված են տվյալ ծրագրի և նրա բաղկացուցիչ դասընթացների նպատակը, կրթական վերջնարդյունքները, դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդները և ուսումնական պլանի քարտեզը: Բոլոր ծրագրերի մասնագրերի մշակման աշխատանքների կատարման ընթացքը պարբերաբար քննարկվել է ֆակուլտետների մեթոդխորհուրդներում և ԵՊՀ մեթոդխորհրդի նիստերում:

2010 թ. հոկտեմբերից ԵՊՀ-ն ներգրավված է ՏԵՄՊՈՒՄ-ի «Համալսարանական ինքնագնահատման համակարգերի մշակում և ինտեգրացում» նախագծի շրջանակներում իրականացվող որակի ապահովման գործընթացներում: Նախագծի հիմնական նպատակն է ԵՊՀ-ում ստեղծել և գործադրել ինքնագնահատման համակարգ, որը կնպաստի համալսարանում որակի մշակույթի զարգացմանը: Նախագծի իրականացման արդյունքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- ստեղծվել է համալսարանի ինքնագնահատման համակարգը,
- իրականացվել են ինքնագնահատման գործընթացների պատասխանատու կազմի վերապատրաստումներ,
- արդյունավետ ինքնագնահատում իրականացնելու համար ստեղծվել են անհրաժեշտ ենթակառուցվածքներ,
- ապահովվել է ուսանողների ներգրավումը ինքնագնահատման գործընթացներում,
- ինքնագնահատման մեխանիզմները գործադրվել են:

2012 թ. հունվարից ԵՊՀ-ն իրականացնում է նաև Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում կատարվող որակի ապահովման ներբուհական համակարգերի ներդրման և դրանց հետագա բարելավման նպատակով տրամադրված դրամաշնորհային ծրագիրը: Այդ ծրագրի շրջանակներում ԵՊՀ-ում կատարվում է «ԵՊՀ որակի ներքին ապահովման համակարգի զարգացում և ինքնագնահատման գործընթացի ներմուծում» նախագիծը, որի նպատակն է բարելավել և զարգացնել ԵՊՀ որակի ներքին ապահովման կառույցները և ընթացակարգերը, ներդնել բուհական ինքնագնահատման գործող համակարգ, որը կնպաստի որակի ներքին մշակույթի ձևավորմանը: Ծրագրի իրագործման արդյունքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. ԵՊՀ որակի ներքին ապահովման հայեցակարգի (քաղաքականության) լրամշակում և համապատասխան կառույցների հիմնում:
2. Կրթական ծրագրերի որակի ապահովման և շարունակական բարելավման պաշտոնական ընթացակարգերի լրամշակում:
3. Ուսանողների գնահատման թափանցիկ և արժանահավատ մեթոդաբանության մշակում:
4. ԵՊՀ ինքնավերլուծության գործընթացի ներմուծում, փորձնական գործադրում և ինքնավերլուծության զեկույցի պատրաստում:

Հաշվետու ուստարում ԵՊՀ-ն մտել է պետական հավատարմագրման փուլ, որն իրականացվում է եվրոպական կառույցների և փորձագետների օժանդակությամբ: Այս կապակցությամբ ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի աշխատակիցները և համալսարանի մի շարք դասախոսներ և ուսանողներ մասնակցել են որակի ապահովման գործընթացներին նվիրված վերապատրաստումների: Ինստիտուցիոնալ և ծրագրային պետական հավատարմագրման նպատակով հաշվետու շրջանում սկսվել և ընթացիկ ուստարում շարունակվել է ԵՊՀ ինքնագնահատման վերլուծական զեկույցի պատրաստման գործընթացը: Համալսարանի համար չափազանց կարևոր այդ գործընթացը հավուր պատշաճի իրագործելու նպատակով ստեղծվել են 7 աշխատանքային խմբեր, որոնք պատրաստում են ինքնագնահատման զեկույցները համապատասխան պետական հավատարմագրման չափանիշների ուղղությամբ: Աշխատանքների առաջին փուլում պատրաստվել է հավատարմագրման 10 չափանիշներից 3-ի ինքնագնահատման զեկույցը: Մեկնարկել և ընթացքում են ինքնագնահատման աշխատանքները մնացած 7 չափանիշների ուղղությամբ:

Կրթության որակի շարունակական բարելավմանը նպաստող կարևոր գործոններից են դասավանդման արդյունավետության վերաբերյալ իրականացվող ուսանողական կիսամյակային հարցումները և ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության ամենամյա հարցումները: Ընդհանուր առմամբ, դրանք միտված են ուսումնական դասընթացների, դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդների, ամբողջական կրթական ծրագրերի և ուսումնական միջավայրի անընդհատ բարելավմանը և կատարելագործմանը: Հարցումների միջոցով նաև փորձ է արվել բացահայտելու կոռուպցիոն երևույթների տարածվածու-

թյան աստիճանը՝ դրանց վերացման ուղղությամբ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու համար:

2011/2012 ուստարում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական կիսամյակային հարցումներին մասնակցել է բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի 8094 ուսանող, որը կազմում է այդ համակարգի ուսանողության մոտ 76,6 %-ը: Հարցումների արդյունքում հումանիտար և բնագիտական մասնագիտությունների գծով ուսանողների հարցումների միջին թվաքանակն միավորը կազմել է համապատասխանաբար 4,51 և 4,57: Ինչպես և նախորդ տարիներին, այս անգամ ևս ուսանողական հարցման արդյունքներն օգտագործվել են դասախոսների պաշտոնավարման և առաջխաղացման համար անցկացվող մրցույթներում: ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցումներին 2011/2012 ուստարում մասնակցել է բակալավրիատի 1379 և մագիստրատուրայի 630 շրջանավարտ, որոնց արդյունքները որոշակի դեր են ունեցել ուսումնական ծրագրերի և ուսումնական միջավայրին ուղղված միջոցառումների մշակման համար:

Այնուհանդերձ, որոշակի անելիքներ դեռ կան արդյունքների մշակման, ամփոփման ու հետագա բարելավող գործողությունների իրականացման ուղղությամբ: Հիմնական շեշտադրումն այստեղ պետք է կատարվի հարցումների արդյունքների հիման վրա համապատասխան բարելավող գործողությունների ու միջոցառումների մշակման և իրականացման վրա: Խնդիր է նաև այն, որ ֆակուլտետները ոչ միշտ են պատասխանատու վերաբերմունք հանդես բերում հարցումների արդյունքների քննարկման և կիրառման նկատմամբ:

Բուհական կրթության որակի բարելավումը խթանող կարևոր գործոններից է նաև մասնագետների պատրաստումը աշխատաշուկայի պահանջմունքներին համապատասխան, ինչի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է բուհ-գործատու սերտ համագործակցությամբ: Նման համագործակցության լավագույն դրսևորում է արդեն 7-ամյա տարեգրություն ունեցող կրթական համագործակցությունը «Մինոփսիս-Արմենիա» ընկերության հետ: 2011/2012 ուստարում շարունակվել է այդ համագործակցությունը, որտեղ ընդգրկված են համալսարանի բակալավրիատի, մագիստրատուրայի, ինչպես նաև ասպիրանտուրայի 36 սովորողներ: Ուշագրավ է, որ առա-

ջին շրջափուլի (բակալավրիատ-մագիստրատուրա-ասպիրանտուրա) արդյունքում երկու ասպիրանտ պաշտպանեցին թեկնածուական ատենախոսություն: Անշուշտ, այս համագործակցության հիմնական նպատակը բարձր որակավորման մասնագետների պատրաստումն է, ինչը փոխշահավետ է գործակցող կողմերի համար. համալսարանի որակյալ շրջանավարտն ապահովվում է աշխատանքով, ընկերությունն էլ համալրվում է պահանջված մասնագետով: Այս առումով համալսարանը փորձում է համագործակցել Հայաստանում գործող նմանատիպ այլ ընկերությունների հետ ևս:

3. Ուսումնական գործընթացի ընթացիկ կազմակերպում

Հաշվետու ուսումնական տարում ձեռնարկվել են ուսումնական գործընթացի բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Իրականացվել է բակալավրիատի ու մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանողների և ԵՊՀ-ի միջև ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ պայմանագրերի կնքման գործընթացը:

Շարունակվել են աշխատանքները ուսանող-դասախոս թվաքանակի հարաբերակցության օպտիմալացման ուղղությամբ: Ավտոմատացված համակարգի գործադրմամբ կատարելագործվել են մասնագիտությունների ուսումնական, աշխատանքային ուսումնական պլանների կազմման գործընթացները: Կրթության որակի բարելավման, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով միջոցներ են ձեռնարկվել պրոֆեսորադասախոսական կազմի աշխատածավալների օպտիմալացման ուղղությամբ:

2011/2012 ուստարվա ուսումնական գործընթացը կազմակերպելու համար հաշվառվել է լսարանային ֆոնդը, իրականացվել են աշխատանքներ այն արդյունավետ օգտագործելու և դասերի կանոնավոր կայացման ուղղությամբ:

Իրականացվել է ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման գործընթացը կրթության որակի ապահովման պահանջներով՝ առաջնորդվելով փոփոխված կանոնակարգով: Ուսանողական նպաստների հատկացումը կատարվել է ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների և ԵՊՀ ֆինանսական միջոցների հաշվին: Ըստ առաջադիմության արդյունքների՝

նպաստ է տրվել բակալավրիատի և մագիստրատուրայի 1668 ուսանողի, որոնցից 198-ը բակալավրիատի 1-ին, 379-ը 2-րդ, 688-ը 3-րդ կուրսերից են, իսկ 403-ը մագիստրատուրայի 1-ին տարվա սովորողներ են: Համակարգի փոխատեղման են ենթարկվել (վճարովիից՝ անվճար և հակառակը) բակալավրիատի 1-ին կուրսի 76 (38,4%), 2-րդ կուրսի 82 (21,7%), 3-րդ կուրսի 109 (16%) և մագիստրատուրայի 1-ին կուրսի 97 (24,8%) ուսանողներ:

Հասարակական ակտիվություն և ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին հատկացվել է կրթաթոշակ: Պետական կրթաթոշակից բացի՝ հատկացվել է նաև ԵՊՀ-ի և այլ կազմակերպությունների կողմից սահմանված անվանական 55 կրթաթոշակ: «Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարովի համակարգի ուսանողներին հատկացվել են ուսման վարձի զեղչեր, որոնցից 1-ին կիսամյակում օգտվել է 1847 ուսանող, 2-րդ կիսամյակում՝ 2316-ը: 1-ին կիսամյակում նրանցից 1405 եղել են բակալավրիատի, 273-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ, իսկ 2-րդ կիսամյակում 1602-ը եղել են բակալավրիատի, 539-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ: Ուսման զեղչերից օգտվողներից 1-ին և 2-րդ կիսամյակներում համապատասխանաբար 169-ը և 175-ը եղել են համալսարանի աշխատակիցների երեխաներ: Երկու կիսամյակներում կիրառված զեղչերի ընդհանուր գումարը կազմել է մոտավորապես 255 մլն դրամ: Կատարված գործընթացը՝ ըստ ուսուցման ձևի, ֆակուլտետների, մագիստրությունների, կուրսերի, զեղչված տոկոսի չափի, կարգավիճակի և գումարների, մանրամասն ամփոփվել է առանձին գրքույկում, որը տրամադրվել է նաև ԿԳՆ-ին:

Ձեռքերի կիրառման և նպաստների հատկացման գործընթացն առավել հստակ և անթերի կազմակերպելու նպատակով ուսումնամեթոդական վարչությունը շարունակել է առաջադիմության վերահսկման աշխատանքները ՏՏԿՀ կենտրոնում մշակված «SuperVision YSU» ծրագրով: Կենտրոնում շարունակվել են քննությունների արդյունքների մշակման ավտոմատացման խնդիրների վերաբերյալ ուսուցողական աշխատանքները ֆակուլտետների դեկանատների աշխատակիցների հետ՝ միտված համակարգչային այդ ծրագրից օգտվելու նրանց հմտությունների զարգացմանը: Տվյալների մշակումն ու վերահսկումը կազմակերպվում է ուսումնամեթոդական վարչության ուսումնական գործընթացի վերահսկման բաժնում գործող ներքին ցանցի միջոցով:

ՀՀ ԿԳ նախարարության «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգի պահանջների համաձայն՝ ԵՊՀ 50 լսարաններում տեղադրվել են տեսախցիկներ՝ տեսագրելու ամփոփիչ ատեստավորման ողջ ընթացքը և ապահովելու բողոքարկումների գործընթացը:

Կազմակերպվել և իրականացվել է ելքային արդյունքների վերահսկման գործընթացը: Ամփոփվել, այնուհետև ԿԳՆ են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

2011/2012 ուստարում պատրաստվել և շրջանավարտներին է հանձնվել 4506 դիպլոմ, որից 2625-ը՝ առկա ուսուցման համակարգի բակալավրիատում, 1193-ը՝ մագիստրատուրայում, 474-ը՝ հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատում, 115-ը՝ մագիստրատուրայում, 70-ը՝ քիմիայի ֆակուլտետի առկա ուսուցման համակարգի 5-րդ կուրսն ավարտածներին: Վերականգնվել և տրվել է շրջանավարտների 29 դիպլոմի կրկնօրինակ:

Հաշվարկվել և վերահսկվել է ուսանողական շարժը: Ձևակերպվել են ՀՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, արտերկիր գործուղման, հիվանդությունների պատճառով տարկետման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամաններ:

Հաշվետու տարում ևս ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել 1-ԳՄ և 3-ԳՄ ձևաչափերով վիճակագրական հաշվետվությունները, որոնք ներառում են քննությունների արդյունքները և շրջանավարտների վերաբերյալ այլ տվյալներ, ինչպես նաև ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմին առնչվող տեղեկատվություն: Մշակվել են ամբիոնային բեռնվածությունների, զեղչերի, տեղափոխությունների և քննաշրջանի արդյունքների տվյալները, որոնք ամփոփվել են առանձին գրքույկի ձևով:

Պրակտիկական ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչներից է, որի ճիշտ կազմակերպումն ու արդյունավետ անցկացումը կրթության որակի գրավականներից են: Այս առնչությամբ անելիք շատ կա: Հաշվետու տարում նախապատրաստական համապատասխան աշխատանքներից հետո ուսումնական պլաններով նախատեսված պրակտիկաները իրականացնելու համար համալսարանը տարբեր պետական և

ոչ պետական հաստատությունների, հիմնարկների, կազմակերպությունների հետ կնքել է պայմանագրեր, որոնց համապատասխան կազմակերպվել են ուսումնական, արտադրական ու մանկավարժական պրակտիկաներ: Արտադրական (այդ թվում՝ մանկավարժական) պրակտիկա է անցել 7822 ուսանող (բակալավր և մագիստրոս), ուսումնական պրակտիկա՝ 1517 ուսանող, որոնցից 1012-ը՝ դաշտային:

4. Ընդունելության նախապատրաստում

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2010/2011 ուսումնական տարում հանրակրթական դպրոցները շրջանավարտներ չեն տվել, 2011/2012 ուստարվա դիմորդների հոսքի պահպանման և ընդունելության նախապատրաստման նպատակով ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության ջանքերով հաշվետու ժամանակաշրջանում ընդլայնվել և ակտիվացվել է համալսարանի գովազդարշավը ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում: Ողջ տարվա ընթացքում այդ գործընթացում առավելագույնս ներգրավվել են ԵՊՀ բոլոր ուսումնական ստորաբաժանումները, ուսանողական և շահագրգիռ այլ կառույցները: Ակտիվ աշխատանք է տարվել ԵՊՀ-ի և հանրակրթական ուսումնական հաստատությունների միջև փոխադարձ կապի ամրապնդման, դպրոց-բուհ համակարգերի շարունակական կրթության սկզբունքի ապահովման ուղղությամբ:

Հաշվետու տարում մեծ աշխատանք է տարվել պետական մասնագիտական հաստատությունների 2011/2012 ուստարվա շրջանավարտների հետ, նրանց ներկայացվել են համալսարանական մասնագիտությունները, ծանոթացրել շարունակական կրթության և ընդհանուր հիմունքներով բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու կարգին: Շուրջ մեկ տասնյակ պետական քոլեջների հետ կնքվել են շարունակական կրթության վերաբերյալ պայմանագրեր: Երևանի պետական համալսարանում 14 մասնագիտությունների գծով կրթություն ստանալու նպատակով նշված քոլեջներից շուրջ 100 հայտ է ներկայացվել: Հաշվետու ուսումնական տարում ևս վարչության աշխատակիցները ԵՊՀ բոլոր ֆակուլտետների դեկանների և պրոֆեսորադասախոսական կազմի աջակցությամբ կազմակերպել են ակնարկային և բովանդակային դասախոսություններ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի 218 դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար: Խիստ կարևորելով հանրակրթական դպրոցների բարձր դա-

սարանների աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ վարչությունը հաշվետու տարվա ընթացքում մայրաքաղաքի և մարզերի 100-ից ավելի դպրոցների աշակերտների համար կազմակերպել է ճանաչողական այցեր և դասախոսություններ ԵՊՀ տարբեր ֆակուլտետներ, բնագիտական հոսքերի աշակերտների համար անցկացվել են լաբորատոր պարապմունքներ «Քիմիա», «Ֆիզիկա» և «Կենսաբանություն» առարկաներից: Ամբողջ տարվա ընթացքում կազմակերպվել են անվճար դասընթացներ «Ինֆորմատիկա», «Բանավոր հաղորդակցման մշակույթ», «Ստեղծագործական աշխատանք» առարկաներից, որոնց մասնակցել է 150 դիմորդ:

2011/2012 ուսումնական տարում ԵՊՀ-ի կողմից առաջարկվող կրթական ծրագրերի և մասնագիտությունների մարքեթինգն ակտիվացնելու, անհրաժեշտ տեղեկատվությունը հասարակությանը, մասնավորապես՝ դիմորդներին հասանելի դարձնելու նպատակով նախապատրաստվել և 2500 տպաքանակով հրատարակվել է «Դիմորդի ուղեցույց-2012» ձեռնարկը, որը պարունակում է անհրաժեշտ տեղեկություն ԵՊՀ ֆակուլտետների, մասնագիտությունների, հեռակա ուսուցման համակարգի, նախապատրաստական դասընթացների և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մասին: Նույն նպատակով պատրաստվել է նաև ԵՊՀ ֆակուլտետների մասին պատմող 1000 հատ տեսասկավառակ: Ուղեցույցները և սկավառակները անվճար բաժանվել են հանրապետության բոլոր հանրակրթական հաստատություններին:

Արդեն բարի ավանդույթ է դարձել հանրակրթական դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար տարբեր առարկաների գծով օլիմպիադայի կազմակերպումը: Հաշվետու տարում այն անցկացվել է Երևանում, Գյումրիում, Իջևանում, Արարատում և Արմավիրում: Նախորդ տարիների համեմատ մեծացել է մասնակից դպրոցների աշխարհագրությունը և աշակերտ մասնակիցների թիվը. 157 դպրոցներից օլիմպիադային մասնակցել է 2409 աշակերտ: Հաղթող են ճանաչվել 453 մասնակիցներ, որոնք համալսարանի ղեկավարության կողմից հանդիսավոր պայմաններում պարգևատրվել են I, II, III կարգի դիպլոմներով, գովասանագրերով և արժեքավոր զրքերով: Օլիմպիադայում լավագույն մասնակցություն և բարձր առաջադիմություն ցուցաբերած հանրապետության 35 դպրոցներ պարգևատրվել են ԵՊՀ մրցանակներով և պատվոգրերով:

Հաշվետու տարում ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության ջանքերի շնորհիվ Արարատի մարզում ևս պաշտոնապես բացվեց ԵՊՀ ներկայացուցչություն՝ համալրելով Շիրակի, Տավուշի, Արմավիրի մեր ներկայացուցչությունների շարքը, որոնք ակտիվ աշխատանքներ են տանում իրենց մարզերում ԵՊՀ կրթական ծրագրերի և մասնագիտությունների մասին անհրաժեշտ տեղեկատվություն ապահովելու ուղղությամբ: ԵՊՀ-ն, հիմք ունենալով նախորդ տարիների համագործակցությունը հիմնական և ավագ դպրոցների հետ, այս տարի ևս համագործակցության պայմանագրեր կնքեց մայրաքաղաքի 4 ավագ դպրոցների հետ՝ դրանց ընդհանուր թիվը հասցնելով 9-ի:

Վերը նշված ավագ դպրոցներում ԵՊՀ տարբեր ֆակուլտետների 19 փորձառու դասախոսներ դասավանդել են հանրակրթական մի շարք դասընթացներ, որոնց վարձատրությունը իրականացվել է ԵՊՀ-ի միջոցների հաշվին: Նշված ծրագիրը բավականին մեծ արձագանք է ստացել ինչպես դպրոցների տնօրինության, այնպես էլ ծնողական խորհուրդների կողմից:

Ինչպես յուրաքանչյուր տարի, հաշվետու ուստարում ևս վարչությունը առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների համար կատարել է մշտական տեղեկատվական աշխատանք՝ մեծապես օժանդակելով ԵՊՀ 2012 թ. ընդունելության կազմակերպման գործընթացին:

Վերոնշյալ համալիր աշխատանքների շնորհիվ է նաև ապահովվել վերջին տարիների ԵՊՀ դիմորդների թվի անընդհատ աճը (բացառությամբ 2011 թ-ի, երբ դպրոցները շրջանավարտներ չեն ունեցել): Նշենք, որ այս տարվա ընդունելության ժամանակ գրանցվել է վերջին տասնամյակների ընթացքում դիմորդների աննախադեպ մեծ թիվ՝ ավելի քան 5400 դիմորդ, որը հանրապետության բոլոր բուհերում հայտագրված դիմորդների մոտ 1/3-ն է:

Հաշվետու ուստարում վարչությունը ձգտել է կատարելագործելու նախապատրաստական դասընթացների համակարգը՝ այդ նպատակով ձևավորելով դասընթացների լայն ընտրանի՝ ըստ կրթական ծրագրերի, և ապահովելով դրանց իրականացման ճկուն ժամանակացույց:

Նախապատրաստական դասընթացների կրթական ծրագրերի բովանդակությունն ու որակը ապահովելու համար, ավարտական քննությունների թեստեր պատ-

րաստելու նպատակով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի առավել հմուտ և փորձառու ներկայացուցիչներից ձևավորվել է փորձագիտական խորհուրդ՝ ըստ հանրակրթական առարկաների: Ունկնդիրների ուսումը կազմակերպվել է փորձագիտական խորհրդի կողմից նախապես քննարկված և հաստատված ուսումնական պլաններով, որոնք համապատասխանում են ընդունելության քննությունների համար նախատեսված ծրագրերին: Դասավանդվող բոլոր առարկաներից ընթացիկ տարվա փետրվար ամսին կազմակերպվել և անց են կացվել ստուգարքներ, ապրիլին՝ ստուգողական գրավոր աշխատանքներ, իսկ մայիսի վերջին տասնօրյակում՝ ավարտական քննություններ:

59 ունկնդիրներից 33-ը, բարեհաջող հանձնելով 2012 թ. ընդունելության միասնական և կենտրոնացված քննությունները, ընդունվել է ուսուցման առկա, իսկ 23-ը՝ հեռակա համակարգեր:

5. Ընդունելություն

2012/2013 ուստարում արձանագրվել է ԵՊՀ դիմորդների աննախադեպ աճ. առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում դիմորդների թիվը դարձել է համապատասխանաբար 5411 և 1755: Կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում համալսարանի բակալավրիատի դիմորդների բաժնեմասը կազմել է 33 %:

2012/2013 ուստարում ԵՊՀ բակալավրիատ ընդունվածների թիվը կազմել է 3611 (անվճար՝ 410, վճարովի՝ 3201), իսկ մագիստրատուրա՝ 1456 (անվճար՝ 458, վճարովի՝ 998): ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում կազմել է 28,8 %: ԵՊՀ դիմորդների և ընդունվածների ընդհանուր հոսքերում իզական սեռի հաշվեկշիռը կազմել է համապատասխանաբար՝ 66,5 % և 65,9 %:

Հաշվետու ուսումնական տարում ԵՊՀ օտարերկրյա դիմորդների թիվը բակալավրիատում կազմել է 80, իսկ մագիստրատուրայում՝ 38: ԵՊՀ ընդունված օտարերկրյա քաղաքացիների թիվը կազմել է՝ բակալավրիատում՝ 50, մագիստրատուրայում՝ 38:

2012/2013 ուստարում հեռակա ուսուցման համակարգում դիմորդների թիվը բա-
կալավրիատում կազմել է 1158, որից ընդունվել է 971-ը, իսկ մագիստրատուրայում՝
705, որից ընդունվել է 561-ը:

6. Հիմնական ուսանողական համակազմ և շրջանավարտներ

2011/2012 ուստարում ԵՊՀ առկա ուսուցման համակարգի ուսանողների թվա-
կազմը եղել է 11515, որից 8837-ը՝ բակալավրիատում (այդ թվում՝ 6531-ը վճարովի),
իսկ 2654-ը՝ մագիստրատուրայում (այդ թվում՝ 1736-ը վճարովի):

Հեռակա ուսուցման համակարգում սովորել է 4334 ուսանող, որից 3531-ը՝
բակալավրիատում (այդ թվում՝ 166-ը՝ երկրորդ մասնագիտության ուսուցմամբ), իսկ
803-ը՝ մագիստրատուրայում:

Օտարերկրյա ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 361, որից 291-ը՝ առկա
ուսուցմամբ, իսկ 70-ը՝ հեռակա:

Համալսարանի հիմնական ուսանողական թվակազմում մագիստրոսական հա-
մակազմի հաշվեկշիռը 16,7 % է, իսկ օտարերկրյա և հեռակա ուսուցման ուսա-
նողներինը՝ համապատասխանաբար 2,3 % և 27,3 % (ներառյալ՝ երկրորդ մասնագի-
տությունը):

2011/2012 ուստարում համալսարանը տվել է առկա ուսուցմամբ 3863 շրջանա-
վարտ, որից 2664-ը՝ բակալավրի կրթական ծրագրով, 1199-ը՝ մագիստրոսի, իսկ հե-
ռակա ուսուցմամբ՝ 604 շրջանավարտ, որից 489-ը՝ բակալավրի կրթական ծրագրով,
115-ը՝ մագիստրոսի: Առկա ուսուցմամբ բակալավրիատը գերազանցության դիպ-
լոմով ավարտել է 395 (15 %) շրջանավարտ, մագիստրատուրան՝ 353 (29 %): Հեռակա
ուսուցմամբ բակալավրիատը գերազանցության դիպլոմով ավարտել է 13 (2.7 %) շրջանավարտ, իսկ մագիստրատուրան՝ 5 (4.3 %):

7. Դասախոսական կազմ և ուսումնական բեռնվածություն

2011/2012 ուսումնական տարում համալսարանի հիմնական դասախոսական
կազմում եղել է 1266 դասախոս, որից պրոֆեսոր՝ 171 (13,5 %), դոցենտ՝ 466 (36,8 %),

ասխատենտ և դասախոս՝ 629 (259/370, 49,7 %): Այդ կազմի 66,7 %-ը ունի գիտական աստիճան: Իգական սեռի հիմնական դասախոսների հաշվեկշիռը կազմել է 53,8 %:

Շարունակվել է ԵՊՀ դասախոսական կազմի երիտասարդացման գործընթացը, մասնավորապես, բարձր տարիքի դասախոսների ուսումնական բեռնվածության նվազեցման և դասավանդման գործընթացում երիտասարդ դասախոսների ներգրավման միջոցով: Հաշվետու տարում դասախոսական կազմը համալրվել է 30 նոր դասախոսներով, որոնցից 7-ը՝ ԵՊՀ ասպիրանտուրայից: Հիմնական դասախոսական կազմում մինչև 35 տարեկան դասախոսների թիվը կազմել է 272, 35-65 տարեկաններինը՝ 758, իսկ 65-ից բարձր՝ 236:

Լրիվ հաստիքային համարժեքով ուսանող/դասախոս հարաբերակցությունը 2011/2012 ուստարում մի փոքր նվազել է 11,2 (նախորդ ուստարում եղել է 12)՝ կապված հիմնականում ուսանողների համակազմի փոքրացման հետ: Այս ուղղությամբ համալսարանի ռազմավարությունն է առաջիկա տարիներին այդ հարաբերակցությունը հասցնել 13-ի:

Հիշատակված միջոցառումները նպատակաուղղված են համալսարանի գործունեության ծախսատարության նվազեցմանը և աշխատակիցների աշխատավարձերի հետագա բարձրացմանը նպաստելուն:

8. Դասախոսների որակավորման բարձրացում և մասնագետների վերապատրաստում

2011/2012 ուստարում շարունակվել են աշխատանքները հետբուհական լրացուցիչ կրթության երկու հիմնական ծրագրով՝ դասախոսների որակավորման բարձրացում և մասնագիտական վերապատրաստում: Ունկնդիրների ընդհանուր թիվը կազմել է 2276, որից 617-ը՝ հանրապետության այլ հաստատություններից:

Լրացուցիչ կրթության ոլորտում շեշտադրումն արվել է դասախոսներին միտված աշխատանքին: Հաշվետու տարվանից ԵՊՀ-ում մեկնարկել է պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման նոր՝ կրթագիտական ծրագիր, որին նախորդել է ծավալուն նախապատրաստական աշխատանք: Հաստատվել են նաև

պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման 2011-2016 թթ. հնգամյա հեռանկարային պլանը և ծրագրի իրականացումն ապահովող կանոնակարգային փաստաթղթերի փաթեթը: Ֆակուլտետներում աշխատանքները համակարգելու և դրանք համահամալսարանական ընդհանուր գործընթացի հունով ուղղորդելու նպատակով ստեղծվել են ֆակուլտետային պատասխանատուների ինստիտուտ և որակավորման բարձրացման խորհուրդ:

Դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի կառուցվածքային և բովանդակային նորացումը պայմանավորված էր ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մի շարք խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Նոր ծրագրով դասախոսը հնարավորություն է ստացել կատարելագործվելու հնգամյա ժամկետում՝ ճկուն անհատական պլանով:

Այն, որ ծրագիրը թե՛ բովանդակությամբ, թե՛ կառուցվածքով արդիական է ու գրավիչ, վկայում է դասախոսների ակտիվ մասնակցությունը. մեկ տարում ունկնդիրների ընդհանուր թիվը կազմել է 1642 մարդ: Անզլերենի դասընթացի 259 մասնակցից 63-ը ստացել է միջազգային հավաստագիր: Ընդառաջելով դասախոսներին՝ կազմակերպվել է նաև ամառային դպրոց՝ «Հասարակագիտական հետազոտության տեղեկատվական աղբյուրներ» թեմայով՝ օգտագործելով ԵՊՀ-ում գործող հետազոտական այլ կենտրոնների ներուժը:

Հարցումները վկայում են, որ դասախոսների կատարելագործման ծրագրի մեկ տարվա արդյունքները գոհացուցիչ են ու խոստումնալից, և նման տեմպերի դեպքում 1-ին շրջափուլի ավարտին կարելի է սպասել դասախոսական կազմի որակական ցուցանիշների շոշափելի աճ:

Այս ամենի համար արժանվույնս գնահատելով հետբուհական լրացուցիչ կրթության վարչության աշխատանքը՝ պետք է նշել նաև դասավանդողների մեծ ներդրումը: Խոսքը վերաբերում է հատկապես ռոմանագերմանական բանասիրության, փիլիսոփայության ու հոգեբանության, ինֆորմատիկայի ու կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետների և մանկավարժության ամբիոնի դասախոսներին:

Իհարկե, ծրագրի իրականացման հետ կապված կան և մտահոգիչ հանգամանքներ: Կրթական կառուցամասով՝ համալսարանի ոչ բոլոր ստորաբաժանումներն են ակտիվորեն մասնակցել դասընթացներին: Հետազոտական կառուցամասով՝ դասա-

խոսների մի զգալի մասն օտարված է գիտական գործունեությունից, որի խթանումը պիտի դառնա առաջիկա տարիների ԵՊՀ հիմնական խնդիրներից մեկը:

Հաշվետու ուստարում ձեռքբերումներ կան նաև երկրորդ՝ մասնագիտական վերապատրաստման ծրագրով: Ավանդաբար իրականացվող դասընթացներից գատ՝ ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգում ներդրվել են նոր կրթական ծրագրեր՝ «Կառավարման հոգեբանություն», «Իրավագիտություն» և «Տնտեսագիտություն»: Պետք է նշել, որ նման դեպքերում նախաձեռնությունը հիմնականում համալսարանին է, ինչի շնորհիվ ԵՊՀ-ն պահպանում է մենաշնորհը լրացուցիչ կրթության ծառայությունների շուկայում:

ԵՊՀ-ում վերապատրաստվում են ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ ազգային անվտանգության խորհրդի, ՀՀ պաշտպանության նախարարության և պետական կառավարման մյուս մարմինների աշխատողները, ինչը վկայում է պետական կառավարման համակարգի զարգացման գործում ԵՊՀ-ի լուրջ ներդրման մասին: ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման 10-ամյակի կապակցությամբ 2012 թ. ԵՊՀ-ն արժանացել է շնորհակալագրի՝ համակարգի ներդրման, կայացման և զարգացման գործում ունեցած ավանդի համար:

Հաշվետու ուստարում համալրվել են համալսարանի հետբուհական լրացուցիչ կրթության վարչության կրթական ռեսուրսները. 2011 թ. հոկտեմբերին ստեղծվել է հեռավար ուսուցման մուտքի կետ, որի շնորհիվ ԵՊՀ դասախոսների համար մատչելի են դարձել Մոսկվայի Բաումանի անվան տեխնիկական համալսարանի էլեկտրոնային ռեսուրսները: Այն նաև նախադեպ կարող է ծառայել ԵՊՀ-ում ուսուցման ժամանակակից այս ձևի զարգացման համար:

Այնուհանդերձ, պետք է նշել, որ թեև զարգացման մեծ հեռանկար ունեցող կրթության այս ոլորտում համալսարանն առաջատար է, բայց ակտիվ է միայն մի քանի մասնագիտությունների գծով: Մինչդեռ հարատև կրթության համակարգի զարգացման համար պետք է ակտիվացնենք համալսարանի բոլոր այն ստորաբաժանումների աշխատանքը, որոնք, ապահովելով մասնագիտական կրթության շարունակականությունը, կարող են հանրապետության աշխատաշուկային առաջարկել պահանջարկ ունեցող որակյալ կրթական ծառայություններ:

9. Տեղեկատվական ռեսուրսների զարգացում

Համալսարանի գործունեության հաջողությունը մեծապես պայմանավորված է բոլոր ոլորտներում տեղեկատվական արդի տեխնոլոգիաների ներդրման և գործարկման արդյունավետությամբ: Այս առումով հաշվետու ժամանակահատվածը ևս աչքի է ընկել ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի լայնածավալ գործունեությամբ: Շարունակվել են աշխատանքները նոր կրթական տեխնոլոգիաների օգտագործման և մշակման, ՏՏ բնագավառում մագիստրոսական կրթական ծրագրերի և առանձին դասընթացների իրականացման, գիտահետազոտական աշխատանքների կատարման, համալսարանական կրթության կառավարման տեղեկատվական համակարգերի մշակման և ներդրման ուղղությամբ:

Հաստատվել է ևս մեկ ԱՄՆ արտոնագիր՝ հիշողության սարքերի կառուցվածքային մոդելի վերաբերյալ: Թեստավորման ուղղությամբ կատարված հետազոտությունների արդյունքները ամփոփվել են երեք նոր հայտերի ձևով և ներկայացվել ԱՄՆ արտոնագրի:

Երևանի պետական համալսարանի և Ռոստոկի համալսարանի (ՌՀ) համատեղ մագիստրոսական ծրագրերի նախագծի համաձայն, որը հաստատվել է Գերմանական ակադեմիական փոխանակության գործակալության (DAAD) կողմից 2009 թ. վերջին, ԵՊՀ-ում 2011 թ. հոկտեմբերից շարունակվել է ՌՀ-ի «Վիզուալ հաշվարկ» մագիստրոսական ծրագիրը, և ներդրման է պատրաստվել «Հաշվողական գիտություն և ճարտարագիտություն» մագիստրոսական ծրագիրը: Ըստ նշված նախագծի՝ երկրորդ տարվա ուսանողները չորրորդ կիսամյակը սովորել են ՌՀ-ում, իսկ նրանց մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանությունը կազմակերպվել է ԵՊՀ-ում՝ ՌՀ հանձնաժողովի հեռահար մասնակցությամբ: Ուսումնառության ավարտից հետո, ՀՀ բուհական համակարգում առաջին անգամ, ուսանողներին տրվել է ինչպես ԵՊՀ, այնպես էլ ՌՀ մագիստրոսի որակավորում: ԵՊՀ-ում սովորելու ընթացքում իրականացվել և իրականացվելու են ինչպես ԵՊՀ ուսանողների այցերը ՌՀ, այնպես էլ ՌՀ դասախոսների այցերը ԵՊՀ: Ծրագրի լավագույն շրջանավարտներին մեծ հնարավորություն է տրվում ուսումը շարունակելու գերմանական բուհերի ասպիրանտուրայում, ինչպես նաև աշխատելու ոլորտի առաջնակարգ ձեռնարկություններում:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել և այժմ էլ շարունակվում է ՀԲԸՄ-ի «Հայկական համացանցային համալսարանի» ներկառուցվածքի միջազգային չափորոշիչներին հարմարեցման գործընթացը: Պարբերաբար ընդլայնվում են համացանցային ուսուցման համար մշակված ծրագրային կադապարներ՝ նախատեսված «Հայոց պատմություն», «Հայկական երաժշտության պատմության», «Հայկական ճարտարապետություն» և «Հայոց լեզու» դասընթացների ուսուցման համար:

Վերակառուցվել է «Հայոց լեզու» դասընթացը՝ բաղկացած 9 մակարդակներից, որն իրականացվում է SCORM ստանդարտի հիման վրա, մուլտիմեդիայի կիրառմամբ: Դասընթացները մշակվում են յոթ ինտերֆեյսային լեզուներով՝ այդ թվում նաև թուրքերեն: Ամբողջովին իրականացվել են «Հայերեն սկսնակների համար», «Տարրական հայերեն», «Հայերենի նախամիջին մակարդակ», «Հայերենի միջին մակարդակ», «Հայերենի բարձր-միջին մակարդակ», «Բարձր մակարդակի նախապատրաստական հայերեն» և «Մասնագիտացված մակարդակի հայերեն» դասընթացները:

Մշակվել են դասընթացների ընթացքի ներկայացման բազմաշերտ գրաֆիկական ժամանակային կադապարներ՝ մուլտիմեդիայի կիրառմամբ: Իրականացվել են հումանիտար առարկաների մատուցման որակապես նոր բազմալեզու կադապարներ: Վերջիններս ընդգրկում են մի շարք նոր ֆունկցիոնալ հնարավորություններ. հորիզոնական և ուղղահայաց նավարկում, անհատական հետագծի վերականգնում, նյութերի բազմաշերտ մատուցում և ավտոմատ կարգավորում:

Մշակվել է նոր ֆունկցիոնալ հարթակ՝ ՀՎՀ-ի պորտալի հրապարակային տեղեկատվության էջերի ավտոմատ հավաքագրման և թարմացման համար:

Նախագծվել և իրականացվել է ինտեգրացված համակարգ, որը, մասնավորապես, թույլ է տալիս կատարել ՀՎՀ-ի ուսանողների գրանցում, վճարների ձևակերպում, այցերի հաշվառում և նյութի իմացության գնահատում:

Իրականացվում են համացանցային ռեսուրսների հետ կապակցված «Շախմատ առաջին դասարանի համար» և «Պատկերային արվեստ» ուսուցողական դասընթացները՝ նախատեսված 16 շաբաթ տևողությամբ ուսուցման համար:

Մշակվում են ծրագրային գործիքներ հեռախոսների, թաբլետների և այլ շարժական սարքերի միջոցով դասընթացների հասանելիության համար:

«Բաց հասարակության հիմնադրամ» ԲՀԻ N-17508 դրամաշնորհի շրջանակում մշակվել և իրականացվել է «Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ» էլեկտրոնային դասընթացը:

10. Պլանավորում և կառավարում

Աշխատանքներ են տարվել ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման մոնիթորինգի ուղղությամբ: Մասնավորապես՝ ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանում հաշվետու ուստարվա համար նախատեսված գործողությունների կատարողականի մոնիթորինգի համաձայն՝ 2011/2012 ուստարում նախատեսված խնդիրների իրականացմանն ուղղված գործողությունները և միջոցառումները հիմնականում կատարվել են:

Լրամշակվել և պատրաստ է տպագրության ԵՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմի 3-րդ հրատարակությունը, որտեղ ներկայացված են ԵՊՀ գործունեության հիմնական 6 բնագավառների ԳԱՑ-երը 2007-2011 թթ. համար:

ԳԱՑ-երի առկայությունը և վերլուծությունը նպաստել է ԵՊՀ որակի ինքնագնահատման կարողությունների զարգացմանը, ինչպես նաև համալսարանի ուժեղ և թույլ կողմերի վերհանմանը՝ ԵՊՀ հետագա գործունեությունը և ռազմավարությունը առավել արդյունավետ կերպով ուղղորդելու համար:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանը հաշվետու ուսումնական տարում արդյունավետ գործունեություն է ծավալել գիտահետազոտական աշխատանքների բնագավառում: Բազմաթիվ համալսարանականներ ընդգրկվել են գիտական նոր ծրագրերում, մրցույթով շահել տարբեր դրամաշնորհներ:

2011/2012 ուստարում Երևանի պետական համալսարանում գիտական աշխատանքներն ընթացել են երեք հիմնական ուղղություններով՝ պետական բազային («Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու

զարգացում»), թեմատիկ և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: Հետագոտական առումով պետք է առանձնացնել ԵՊՀ կազմում գործող Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գործունեությունը: ԵՊՀ նոր ձեռքբերումներից էր քաղաքային ծրագրերի ոլորտում 3 նոր հետազոտական լաբորատորիաների ստեղծումը:

Դրամաշնորհային (թեմատիկ) ծրագրերի հաշվետվությունները տրվել են գիտական փորձաքննության, որի շրջանակներում գնահատվել են ընթացիկ հաշվետվության գիտական և գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, գիտության տվյալ բնագավառում հետազոտական խմբի ձեռքբերումները և նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը՝ թեման իրականացնելու համար, երիտասարդ (մինչև 35 տարեկան) մասնագետների ընդգրկվածությունը, թեմայի իրականացման նախադրյալները, փուլերը և ժամկետները, պահանջվող ֆինանսական միջոցների հիմնավորվածությունը և գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններով պայմանավորված այլ դրույթներ: Երևանի պետական համալսարանում 2011 թ. մարտից գործում է 34 դրամաշնորհային ծրագիր: Ընդհանուր առմամբ, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված դրամաշնորհային ծրագրերի մրցութային շերտ հաղթահարած ծրագրերի 24 %-ից ավելին բաժին է ընկնում Երևանի պետական համալսարանին: Այսօր ԵՊՀ-ում դրամաշնորհային ծրագրերում ընդգրկված գիտաշխատողների թիվը մոտ 200 է:

Հաշվետու ժամանակաշրջանում երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագրերի (Ա դաս - 9, Բ դաս - 4) տարեկան և ընթացիկ հաշվետվությունները անցել են փորձաքննություն:

Աշխատանքները շարունակվել են նաև 2005 թվականից գործող պետական քաղաքային ֆինանսավորմամբ գիտահետազոտական լաբորատորիաներում, որոնց թիվն այսօր հասնում է երկուսուկես տասնյակի, և 9 կենտրոններում: Երևանի պետական համալսարանը, բացի տեղական պետական դրամաշնորհային ծրագրերից, մասնակից է նաև տարբեր միջազգային դրամաշնորհային ծրագրերի: Այդպիսի ծրագրերից են ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների բեռնուսական հանրապետական հիմնադրամի միջև կնքված համաձայնագրի շրջանակներում համաֆինանսավորման սկզբունքով անցկացվող գիտական դրամաշնորհային, ինչպես նաև ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Ռուսաստանյան հումա-

նիտար գիտական հիմնադրամի միջև կնքված համաձայնագրի շրջանակներում համաֆինանսավորման սկզբունքով անցկացվող գիտական ծրագրերի մրցույթները: Մրցույթներում հաղթող ճանաչված ծրագրերից 5-ը (Հայ-Բելառուսական) և 1-ը (Հայ-Ռուսական) իրականացվում են Երևանի պետական համալսարանում:

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանի գիտակազմակերպական բաժնի անմիջական աջակցությամբ ձևակերպվել և պետական գրանցում է ստացել 7 արտոնագիր, որոնցից 4-ը՝ քիմիայի բնագավառում, 2-ը՝ ֆիզիկայի, 1-ը՝ երկրաբանության: Բաժնի աշխատակիցների կողմից պարբերաբար ուսումնասիրվում է արտոնագրային գրականությունը՝ «Մտավոր սեփականության գործակալության» տրամադրված գյուտերի նկարագրությունները և օրենսդրական ակտերը: Այժմ աշխատանքներ են տարվում ԵՊՀ-ին «Եվրասիական արտոնագրային տեղեկատվական բազային» ազատ հասանելիության տրամադրման ուղղությամբ:

Անցած ուսումնական տարին հարուստ էր նաև տարբեր գիտական միջոցառումներով: Դրանցից պետք է առանձնացնել տարբեր բնագավառների վերաբերող մի շարք գիտաժողովներ, մասնավորապես՝ «Հարմոնիկ անալիզ և մոտավորություններ» V գիտաժողովը (Օաղկաձոր, 10-17.09.2011 թ.), «Հեղուկ բյուրեղների օպտիկա (OLC-2011, Optic of Liquid Crystals)» գիտաժողովը (Երևան, 25.09-01.10.2011 թ.), «Լեզուն, գրականությունը և արվեստը միջմշակութային համատեքստում» գիտաժողովը (Երևան, 04-08.10.2011 թ.), Հայաստանի 3-րդ հանրապետության 20-ամյակին նվիրված միջբուհական գիտաժողովը (Երևան, 21-22.10.2011 թ.) «Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ» գիտաժողովը (Երևան, 24.04-29.04.2012 թ.), «Սուպերսիմետրիան ինտեգրվող համակարգերում» (Երևան, 27-30.08.2012 թ.) գիտաժողովը և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում, ինչպես արդեն նշվեց վերևում, բեղուն գործունեությամբ աչքի է ընկել նաև հայագիտական հետազոտությունների ինստիտուտը: Մասնավորապես, հրատարակության են ներկայացվել 8 մենագրություն, 1 ատլաս, 4 մեծ ֆորմատի քարտեզ, ինչպես նաև ավելի քան 52 գիտական հոդված, 1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 8 զեկուցումների թեզիս: Կազմակերպվել են մի շարք գիտաժողովներ, կլոր սեղաններ, որոնցից են՝ ԵՊՀ-ում անցկացված «Հայաստանի անվտանգությունը տարածաշրջանային ռազմաքաղաքական գործընթացների համատեքստում»

տում» խորագրով հանրապետական գիտաժողովը, «Ազգային գաղափարախոսությունը տեղեկատվական անվտանգության համատեքստում» թեմայով գիտաժողովը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 21-ամյակին, «Հեռուստատեսության դերը հանցավորության աճի հարցում» կլոր սեղանը:

Հաշվետու ուստարում համացանցում հայագիտության ներկայացվածության վերաբերյալ կատարված մշտադիտարկման արդյունքում վեր հանված խնդիրներից ելնելով՝ ինստիտուտի կողմից թվայնացվել և ՀՀԻ-ի կայքերում տեղադրելու համար պատրաստվել է 160 հայագիտական ուսումնասիրություն: Հիշյալ ժամանակահատվածում նախագծվել, պատրաստվել և այսօր արդեն ինստիտուտի պաշտոնական կայքից գատ՝ շահագործվում է հայագիտական ուղղվածության ևս յոթ կայք, որոնք արտացոլում են հայոց պատմության, Հայոց ցեղասպանության, հայոց լեզվի և հայ գրականության, հայկական սփյուռքի, հնագիտության, մշակույթի, Հայ առաքելական եկեղեցու պատմության հիմնախնդիրները: Կայքերում ոչ միայն հնարավոր է անվճար ներբեռնել հայագիտական գրականություն, այն տարածել բլոգներում և սոցցանցերում, այլև օգտատերերը կարող են կայքերում առկա ցանկացած տեքստային նյութ ունկնդրել՝ համադրելով այն մնացած օտարալեզու տարբերակների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում ակտիվ գործունեություն են ծավալել նաև հանրապետության գիտական համակարգում իրենց տեսակի մեջ եզակի մի շարք հետազոտական կենտրոններ, լաբորատորիաներ և այլ կառույցներ: Դրանք են, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնը, Էվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը, քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնը, ուժեղ դաշտերի ֆիզիկայի կենտրոնը, Էկոլոգիական անվտանգության կենտրոնը, հեռանկարային հետազոտությունների միջազգային կենտրոնը, ռուսական կենտրոնը, եգիպտագիտության հայկական կենտրոնը, հունագիտության գիտաուսումնական կենտրոն-գրադարանը, ինչպես նաև ԵՊՀ պատմության թանգարանի, հնագիտական հետազոտությունների, կիրառական սոցիոլոգիայի գիտահետազոտական լաբորատորիաները:

ԵՊՀ-ն միշտ կարևորել է երիտասարդ գիտական կադրային ներուժի կայացման խնդիրը: Ներկայումս ԵՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգի ասպիրանտների ընդհանուր թիվը 311 է (առանց օտարերկրյա քաղաքացիների): Նշենք, որ վերջին տա-

րիներին տարբեր մասնագիտությունների գծով թե՛ դոկտորական, թե՛ թեկնածուական ատենախոսությունների թիվը շարունակական աճ է արձանագրել: ԵՊՀ-ում գործող 11 մասնագիտական խորհուրդներում 2011/2012 ուստարվա ընթացքում պաշտպանվել է 12 դոկտորական և 130 թեկնածուական ատենախոսություն (նախորդ ուստարում եղել է համապատասխանաբար՝ 10 և 78):

ՄԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների թվում առաջատար տեղ ունի գրադարանը, որն իր սպասարկման և տեղեկատվական գործառույթների որակով մեծապես ազդում է ուսումնական և գիտահետազոտական գործընթացների վրա:

Հաշվետու ուստարում գրադարանում կատարվել են աշխատանքներ, որոնց միտումը բուհական տեղեկատվական հասարակության ժամանակակից պահանջները բավարարելն է:

Դրական տեղաշարժ է կատարվել գրադարանային գործունեության գրեթե բոլոր ոլորտներում՝ կապված տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման, աշխատանքային գործընթացների ավտոմատացման, գրականության համալրման, մշակման, մուտքագրման, հաշվառման ու պահպանման հետ: Էապես բարձրացել են սպասարկման ցուցանիշները, որոնց նպաստել են էլեկտրոնային պաշարների բաժանորդագրությունը, էլեկտրոնային պատվերների կիրառումը, նոր միասնական տոմսերի ներդրումը: Սկսվել է հնատիպ և հազվագյուտ գրականության, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների թվայնացման գործընթացը: Ընդլայնվել են հանրապետության և արտերկրի ինչպես գրադարանային, այնպես էլ հրատարակչական կառույցների հետ համագործակցական կապերը:

Հաշվետու շրջանում գրադարանային պահոցները համալրվել են ըստ ուսումնական ծրագրերի և գիտական գործընթացի պահանջների: Գրքային ֆոնդ մուտք է գործել 2.121 անուն 17.277 միավոր գրականություն, այդ թվում՝ 16.807 միավոր գիրք, 366

ամսագիր, 83 ատենախոսություն, թերթերի 104 հավաքածու: Դրանցից գիտական է 9.946 միավորը, ուսումնական՝ 299 անուն 7.036 միավորը, գեղարվեստական՝ 295 միավորը:

Համալրման հիմնական աղբյուրներ են եղել դրամական փոխանցումները, միջազգային գրքափոխանակությունը, ԵՊՀ տպագրատունը: Համալրմանն օժանդակել են Բոննի, Ռոստոկի, Կալիֆոռնիայի, ԱՄՆ Կոնգրեսի գրադարանները, ՄԱԿ-ը, ԵԱՀԿ-ն, Գերմանական գիտահետազոտական կենտրոնը, Միջազգային դրամական ֆոնդը, ՀՀ-ում Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի դեսպանատները: Արժեքավոր գրականություն է ստացվել Ամերիկյան գրադարանային միությունից, նվիրատվություն՝ Հարություն Փամբուկյանի, Կարեն Գրիգորյանի կողմից: Համալրման մաս են կազմել նաև կորցրած գրքերի դիմաց արված փոխհատուցումները: Համալրմանը զուգահեռ գրադարանը գրքափոխանակություն է կատարել Մատենադարանի, Ազգային գրադարանի, «Նորավանք» հիմնադրամի, «Անկյունաքար» հրատարակչության, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հետ, նվիրատվությամբ աջակցել է հանրապետության միջարք բուհական, դպրոցական, մարզային գրադարանների ու կազմակերպությունների (ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, Վանաձորի, Գավառի, Արցախի համալսարաններ, Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղ, Խարբերդի, Արցախի կադետական, Թաթուլ Կրպեյանի անվան դպրոցներ, քրեակատարողական հիմնարկներ, Արցախի զորամիավորումներ և այլն):

Նոր ստացված գրականությունը մշակվել է ինչպես ավանդական եղանակով՝ տեղեկատու ապարատի՝ այբբենական և կարգային գրացուցակների, վերնագրային, թեմատիկ և այլ քարտարանների շարունակական ձևավորմամբ, այնպես էլ էլեկտրոնային «Ալեֆ» ծրագրով մուտքագրմամբ:

Համալիր աշխատանք է կատարվել նաև գրապահոցում՝ ֆոնդերի պահպանման և սպասարկման ուղղությամբ: Կազմակերպվել են բազմաձյուղ գրականության գիտական համակարգումն ու պահպանումը, ստուգվել են ֆոնդերը, առանձնացվել հնատիպ գրքերը: Հաշվետու ուստարում առձեռն ֆոնդ և գրապահոց մուտք է գործել 11.500 միավոր գրականություն: Ընթերցասրահներին սպասարկվել է 454 գիրք և 215 ատենախոսություն, մուտքագրման համար համակարգչային բաժին է ուղարկվել 11.034 գիրք: Կազմատան միջոցով վերանորոգվել է 6.500 գիրք: Դասագրքային առձեռն

Ֆոնդից սպասարկումն իրականացել է էլեկտրոնային տարբերակով: Կատարվել են նաև նոր գույքամատյաններում գրականության վերագրանցման աշխատանքներ: Գրապահոցից սպասարկումը կատարվել է աբոնեմենտի միջոցով, որում առկա շրջանառու գեղարվեստական ֆոնդերը համալրվել են 7.534 միավոր հայերեն և ռուսերեն գրականությամբ: Այս ֆոնդերից գրքատացքը կազմել է շուրջ 5.500 միավոր: Թղթային պատվերներին զուգահեռ իրականացվել են նաև առցանց 1.040 էլեկտրոնային պատվերներ: Հաշվետու տարում գրադարանի բաժանորդ դարձածների թիվը 1.228 է:

Գրադարանի կարևորագույն միտումներից է հնարավորինս վերացնել հատկապես ուսումնական գրականության պակասուրդը, ունեցած գրականության պաշարները ծառայեցնել ընթերցողների էլ ավելի մեծ շրջանակի: Այս խնդրի լուծման ճանապարհը ինչպես ընթերցասրահների գործունեության ակտիվացումն է, դրանց ապահովումը ուսումնական ծրագրերին համապատասխան անհրաժեշտ գրականությամբ, այնպես էլ որակյալ սպասարկման կազմակերպումը: Հաշվետու շրջանում ընթերցասրահների ֆոնդերը համալրվել են 5.877 միավոր տպագիր արտադրանքով, որից գիրք՝ 1.348, թերթ և ամսագիր՝ 4.529: Առկա ընդհանուր գրապաշարը ընթերցասրահներում կազմում է 73.317 միավոր: 786.073 հաճախումների արդյունքում ընթերցասրահներն ունեցել են 750.133 գրքատացք: Ընթերցողների պատվերներով գրապահոցի պաշարներից ժամանակավոր օգտագործման համար ընթերցասրահներ են բերվել 454 միավոր աստենախոսություններ, ամսագրեր: Կազմատան միջոցով պատճենահանվել և վերանորոգվել է 1.203 միավոր գիրք: Վերանայվել և կարգի են բերվել քարտարանները:

Գրադարանի կարևորագույն խնդիրներից մեկն էլ պատմամշակութային արժեք ունեցող գրականության՝ հնատիպ և հազվագյուտ գրքերի, Գյուլբենկյանի, Թաքեայանի հավաքածուների, արվեստին վերաբերող գրականության պահպանումն է՝ միաժամանակ չսահմանափակելով դրանց տեղեկատվական գործառույթը: Հաշվետու տարում հնատիպ, հազվագյուտ և արվեստի գրականության բաժինը դադարեցրել է սպասարկման գործընթացը: Կատարվել և ընթացքի մեջ են առկա ֆոնդերի անվանական ստուգումը և վերահաշվառումը, համեմատումը գույքամատյանների, բաժնի մատյանների և ծառայողական քարտարանների հետ, գրականության վերագրանցումը նոր մատյաններում: Միաժամանակ, իրականացվել են ֆոնդային տեղաշար-

ժեր, համալրման, զտման, գրքերի մաքրման ու մասնակի վերականգնման աշխատանքներ: Գործընթացի մեջ են օտարալեզու գրապաշարից՝ ըստ լեզուների տարանջատ ֆոնդերի ստեղծման, իրավաբանության և պատմության ֆոնդերի այբբենական և կարգային գրացուցակների՝ նոր քարտերով համալրման, գրքամատյաններում մատենագիտական տվյալների գրանցման աշխատանքները:

Նորօրյա բուհական գրադարանի կայացման գրավականը տեղեկատվական տեխնոլոգիական միջոցներով ապահովվածությունն է, որի շնորհիվ հնարավոր է իրականացնել լիակատար ավտոմատացման ծրագիրը: Համալսարանի գրադարանում գործող համակարգչային ծառայությունների և ավտոմատացման բաժինը հաշվետու տարում շարունակել է Հայաստանյան համահավաք գրացուցակի համալրման և պահպանման աշխատանքները: Էլեկտրոնային պահոցներ է մուտքագրվել 14.284 միավոր գրականություն, որից 1.859-ը՝ հնատիպ և հազվագյուտ: ԵՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ասպիրանտների համար շարունակվել է էլեկտրոնային հոդվածների պատվերների սպասարկումը՝ Ֆրեզնոյի համալսարանի և «SUBITO» էլեկտրոնային հոդվածների գերմանական ծառայության միջոցով: Պատկերամուտի օգնությամբ թվայնացվել, մշակվել և կայքէջում տեղադրվել են 719 գիրք (հիմնականում մեծ պահանջարկ ունեցող ուսումնական ձեռնարկներ և մի քանի հնատիպ) և 2.410 գիտական հոդված, որոնցից կարելի է անվճար օգտվել համալսարանական տարածքն ընդգրկող համացանցից: Բաժնին տրամադրված փոքրամասշտաբ 6 պատկերամուտների շնորհիվ արդյունավետ է դարձել ինչպես գրքակողերի մուտքագրումը, այնպես էլ ընթերցողական տոմսերի պատրաստումը: Հաշվետու տարում դրանց թիվն անցել է 1.230-ից: Ընթացքի մեջ է միասնական ընթերցողական տոմսերի պատրաստումը, որը մեծապես կնպաստի ուսանող-գրադարան կապի սերտացմանը: Բաժնի մասնակցությամբ գործարկված գրադարանի կայքէջը շարունակաբար հարստացվում է գրադարանի գործունեությունն արտացոլող տեղեկույթով:

Գրադարանում շարունակվել է նաև հրատարակչական գործը: «ԵՊՀ անվանի գիտնականների կենսամատենագիտություններ» շարքից պատրաստվել և լույս է տեսել «Դավիթ Սեդրակյանի կենսամատենագիտությունը», ընթացքի մեջ է Վլադիմիր Սարգսյանի գիտական աշխատանքների մատենագիտության կազմումը:

Գրադարանն ակտիվորեն համագործակցել է հայաստանյան և օտարերկրյա համալսարանական գրադարանների, գրադարանային կազմակերպությունների և էլեկտրոնային ռեսուրսներով զբաղվող կազմակերպությունների հետ: Մրա արդյունքում մատչելի գներով ձեռք է բերվել ռուսալեզու 201 ամսագրերի ազատ մուտքի հնարավորություն համալսարանի ողջ տարածքից: 2012 թ. ապրիլին գրադարանը կազմակերպել է «Ռուսաստանի պետական գրադարանի ատենախոսությունների վիրտուալ ընթերցասրահի պաշարներից օգտվելու մասին» սեմինար, որը վարել են Ռուսաստանի պետական գրադարանի մասնագետները: Դրա արդյունքում գրադարանում բացվել է վիրտուալ ընթերցասրահ, որտեղ օգտվողին հասանելի են ավելի քան 700.000 ատենախոսությունների և սեղմագրերի էլեկտրոնային տարբերակներ: Գրադարանը, ԳՍՏԱ հիմնադրամի հետ համատեղ, պրոֆեսորադասախոսական կազմի և սովորողների համար կազմակերպել է «Հայկական վիրտուալ գիտական գրադարան. Հնարավորություններ և օգտագործման հմտություններ» (զեկուցող՝ Չարլզ Դանլափ, ՔՀՄՀ ԱՄՆ) և «Thomson Reuters Web of Knowledge. տեղեկատվական շտեմարան. Հայկական հետազոտությունները համաշխարհային ասպարեզում» (զեկուցող՝ Ահմեդ Բուրդիդա, Thomson Reuters) սեմինարները, որի արդյունքում համալսարանի ողջ տարածքից հասանելի են դարձել ավելի քան 10.000 ամսագրեր՝ շուրջ 10 միլիոն գիտական հոդվածներով, և 60.000 գրքերի էլեկտրոնային տարբերակներ: Գրադարանի ճեմասրահում Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հետ համատեղ կազմակերպվել է հայ-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակին նվիրված ցուցահանդես, որին մասնակցել է դեսպան Ջոն Հեֆֆերնը: Գրադարանի աշխատակիցները պարբերաբար մասնակցել են համալսարանում և գիտաուսումնական այլ հաստատություններում կազմակերպված գիտաժողովների, սեմինարների, գրքի շնորհանդեսների, որը նպաստում է նրանց որակավորման բարձրացմանը: Հաշվետու տարում, Գրադարանի օրվա կապակցությամբ, համակարգչային ծառայությունների և ավտոմատացման բաժնի վարիչ Աիդա Սարգսյանը պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԵՎ ՏՊԱԳՐԱԿԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարին նշանակալից էր հատկապես հրատարակչության համար:

2012 թ. ապրիլին կայացավ Հայոց մեծ եղեռնի 100-ամյակին նվիրված՝ ԵՊՀ հրատարակչության կողմից լույս ընծայված գրքերի շնորհանդեսը: Ներկայացված էին՝

1. Հր. Սիմոնյանի «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 ապրիլ)» արժեքավոր ուսումնասիրությունը, որը լույս է տեսել Լոնդոնում անգլերեն,

2. Յակոբ Քյունցլերի «Արյան և արցունքի երկրում» (գերմաներենից թարգմանությունը՝ Դորա Սաքայանի և Էվ. Մակարյանի),

3. Ալ. Սաֆարյանի «Զիյա Գյոքալփը և «թյուրքականության» հիմունքները»,

4. Լուսինե Սահակյանի «Համշենի մանրատեղանունները»,

5. Թուրքերը թուրքերի մասին, հատ. 1 (կազմ.՝ Ստ. Պետոյան), հատ. 2 (կազմ.՝ Ստեփան Պողոսյան), հատ. 3 (կազմ.՝ Ռ. Մելքոնյան) և անգլերեն ամփոփագիրը,

6. Հովհաննես Շիրազի «Անի» անտիպ պոեմը,

7. Անդրանիկի «Առաքելոց վանքին կոիվը» հուշագրությունը:

Հայոց մեծ եղեռնի թեման առաջնային է ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համար: Ինստիտուտը հրատարակչության է պատրաստել Ռենե Պյուռլի «Զմյուռնիայի վախճանը» (աշխատասիրությամբ Վարուժան Պողոսյանի, ֆրանսերեն և հայերեն), Հր. Միրզոյանի և Նատալյա Գոնչարի «Ինչու է Թուրքիան կոչ անում Հայոց ցեղասպանության դատը վստահել պատմաբաններին», Էդգար Հիլզենրաթի «Վերջին մտքի հեքիաթը» էսպերանտո լեզվով և այլն:

Ինստիտուտի կողմից հրատարակչության են պատրաստվում Վարուժան Պողոսյանի «Հայոց ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում», Գոնսալո Գուարչի «Սպիտակ լեռ» վեպը, որը եռագրության վերջին գործն է և այլն:

2012 թ. մայիսին հայ տպագրության 500-ամյակի և Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակելու կապակցությամբ Երևանի պետական համալսարանը կազմակերպեց հանդիսություն՝ նվիրված Հայաստանի Հանրապետությունում գործող ամենահին հրատարակչության 90-ամյակին (թեև վերջերս հայտնաբերված մի գրքի՝ Ջ. Ուիլյամսի «Հոգեբանություն» ուսումնական ձեռնարկի անվանաթերթին կարդում

ենք «Երևանի համալսարան, Ալեքսանդրապոլ, 1920 թ.», այսինքն՝ ԵՊՀ հրատարակչությունը 92 տարեկան է):

Վերոնշյալ միջոցառման ընթացքում արձանագրվեց, որ հրատարակչությունը գործել է անընդմեջ, անգամ Հայրենական մեծ պատերազմի տարիներին լույս են տեսել մեծարժեք գրքեր, իսկ ամենակարևորը՝ հրատարակչությունը հավատարիմ է մնացել իր կոչմանը՝ տպագրել բացառապես ուսումնագիտական գրականություն:

Հանդիսությանը ներկա էր «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության Հայկական բաժանմունքի երկարամյա տնօրեն, հայրենասեր մտավորական, ԵՊՀ պատվավոր դոկտոր Զավեն Եկավյանը: Նրա նախաձեռնությամբ ստեղծված «Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայկական մատենաշարով» ԵՊՀ հրատարակչությունը լույս է ընծայել 135 հատոր հայագիտական սովորածավալ գիրք:

Հրատարակչության հաջողություններից պետք է առանձնացնել հաշվետու տարում ականավոր հայագետ Նիկ. Ադոնցի երկերի հինգհատորյակի հրատարակման ավարտը: Ադոնցի երկերի հրատարակչությունը կարևոր ներդրում է ոչ միայն հայ պատմագիտության, այլև համաշխարհային գիտական ասպարեզում: Բազմիցս ձեռնամուխ են եղել նրա երկերի հրատարակմանը, բայց չի հաջողվել որովհետև Ադոնցը գրել է հայերեն, ֆրանսերեն, ռուսերեն, հունարեն, տպագրվել է Պետերբուրգում, Բրյուսելում, Փարիզում, Լիսաբոնում, Բոստոնում և այլուր: Բազմազան է նաև Ադոնցի ուսումնասիրությունների ոլորտը՝ պատմագիտություն, բանասիրություն, լեզվաբանություն, բնագրագիտություն, կրոն, արվեստի տարբեր ճյուղեր, բյուզանդագիտություն: Հիշատակված փաստերը բավական են պատկերացում կազմելու համար, թե ինչ տքնաջան աշխատանք է կատարել ԵՊՀ դասախոս, պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանը, ով հրատարակության է պատրաստել հինգհատորյակը:

Հասմիկ Ստեփանյանի «Հայերի ներդրումը օսմանյան կայսրությունում» մեծարժեք հետազոտությունը 2012 թ. արժանացավ ՀՀ Նախագահի մրցանակին:

Նույն մատենաշարով հրատարակված գրքերից հիշատակության արժանի են նաև Բ. Հովակիմյանի «Շեքսպիրը հայ թատրոնում» տարեգրությունը, որն ընդգրկում է 150 տարվա գործունեություն: Ներկայացված են հարյուրավոր քաղաքներում հայ դերասանների կերտած շեքսպիրյան կերպարները, հայ ռեժիսորների գործունեությունը, հայ թարգմանիչների և թեմային առնչվող շատ փաստեր:

Լույս է տեսել արվեստագիտության դոկտոր Բարկեն Հարությունյանի «Վահրամ Փափազյան. կյանքի և ստեղծագործության տարեգրություն» սովորաձևով գիրքը:

ԵՊՀ ֆինանսավորմամբ լույս են տեսնում և՛ հումանիտար, և՛ բնական գիտությունների գծով դասագրքեր, ձեռնարկներ: Ուսումնական գրականության պակասն աստիճանաբար նվազում է: Իսկ «Հայոց պատմություն» դասագիրքը (Հրաչիկ Միմոնյանի խմբագրությամբ, մոտ 1000 էջ, 3000 տպաքանակով) առաջին փորձն է ներկայացնելու հայ ժողովրդի պատմությունը անտիկ ժամանակներից մինչև մեր օրերը:

Հաշվետու տարում ԵՊՀ հրատարակչության աշխատակազմը արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության պատվոգրի՝ Հայաստանի գրահրատարակչական գործի զարգացման ասպարեզում ունեցած նշանակալի ավանդի և հայ տպագրության 500-ամյակի առթիվ, իսկ տնօրեն Պ. Ստեփանյանը հայ տպագրության 500-ամյակի, կրթության և գիտության բնագավառներում ներդրած նշանակալի ավանդի համար ՀՀ Նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՄՆԵՐ

«Բանբեր Երևանի համալսարանի»

«Բանբեր Երևանի համալսարանի» քառամսյա հանդեսը լույս է տեսնում 1967 թվականից: Ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի սահմանած՝ դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցանկում: Սկսած առաջին համարից՝ այն գիտական հոդվածներ է հրատարակել հումանիտար և հասարակական բոլոր գիտությունների գծով, սակայն, հաշվի առնելով արդի աշխարհում գիտությունների զարգացման միտումները և ըստ այդմ գիտական հրատարակությունների առջև ծառայած նոր խնդիրները, ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ «Բանբերը» 2010 թ. հունվարի 1-ից լույս է տեսնում նոր ձևաչափով՝ նույն պարբերականությամբ (տարեկան երեք համար), բայց մասնագիտական վեց շարքով, որոնցից ամեն մեկն ունի կայուն համարանիշ և 5 մամուլ ծավալ:

Շարքերից յուրաքանչյուրն ունի խմբագրական խորհուրդ և պատասխանատու խմբագիր: Նյութերը տպագրվում են հայերեն, ռուսերեն և անգլերեն: Տպագրված հոդ-

վածներն ունեն մյուս երկու լեզվով ամփոփում: Հեղինակների մասին երեք լեզվով տրվում է համառոտ տեղեկատվություն:

Հանդեսում տպագրվում են նաև ՀՀ գիտական հաստատությունների, սփյուռքի և արտերկրի ճանաչված գիտնականների հոդվածներ:

Սկսած 2012 թ.՝ «Բանբերի» նյութերը ամբողջությամբ տեղադրվում են ԵՊՀ կայքէջում: Շուտով հանդեսը կունենա իր ինքնուրույն կայքէջը, որտեղ կտեղադրվեն նաև նախորդ տարիներին տպագրված նյութերը:

«Գիտական տեղեկագիր»

1967 թվականից հրատարակվող «Գիտական տեղեկագիր» հանդեսի (բնական գիտություններ) խմբագրական քաղաքականությունը 2009-ից լուրջ փոփոխություններ կրեց, ինչի արդյունքում հանդեսը ներկայումս լույս է տեսնում երեք սերիայով՝ «Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ», «Քիմիա և կենսաբանություն», «Երկրաբանություն և աշխարհագրություն»: Յուրաքանչյուրը հրատարակվում է տարեկան երեք համար պարբերականությամբ: 2009 թվականից «Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ» սերիան հրատարակվում է անգլերեն: Նախատեսված է 2013 թվականից անգլերեն հրատարակել նաև «Քիմիա և կենսաբանություն» սերիան:

2009 թվականից առ այսօր լույս է տեսել հանդեսի 33 համար, որոնցում հրատարակվել է 327 գիտական հոդված (այդ թվում՝ ֆիզմաթ գիտություններ՝ 124 հոդված, քիմիա և կենսաբանություն՝ 132, երկրաբանություն և աշխարհագրություն՝ 71): Տպագրված յուրաքանչյուր հոդված անցել է լուրջ գրախոսություն, եղել են բազմաթիվ խորհրդակցություններ հեղինակի և խմբագրության աշխատակիցների միջև:

2012 թվականին լույս է տեսել հանդեսի երկուսական համար, որոնցում տպագրվել է 56 հոդված, ևս մեկական համար լույս կտեսնի մինչև տարեվերջ:

Սկսած 2007 թվականից՝ հանդեսի յուրաքանչյուր համար զետեղվում է ԵՊՀ կայքէջում և հասանելի է յուրաքանչյուր հետաքրքրվողի: Մոտ ապագայում «Գիտական տեղեկագիրը» կունենա սեփական ընդլայնված կայքէջը, որում հասանելի կլինեն ոչ միայն այսօրվա հոդվածները, այլ նաև, աստիճանաբար թվայնացվելով, կզետեղվեն 1967 թվականից ի վեր հանդեսում հրատարակված բոլոր աշխատանքները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանը միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրների 200 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ, որոնց թվում են՝ Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանը (Ռուսաստան), Վոլգոգրադի պետական համալսարանը (Ռուսաստան), Բոլոնիայի համալսարանը (Իտալիա), Տուլայի համալսարանը (Իտալիա), Բեռլինի ազատ համալսարանը (Գերմանիա), Տրիերի համալսարանը (Գերմանիա), Փոլ Վալերի համալսարանը (Մոնպելիե-III) (Ֆրանսիա), Պիեռ Մենդեսի անվան համալսարանը (Ֆրանսիա), Անտվերպենի համալսարանը (Բելգիա), Ժնևի համալսարանը (Շվեյցարիա), Կալիֆոռնիայի համալսարանը (Բերկլի, ԱՄՆ), Անն-Արբոր Միչիգանի համալսարանը (ԱՄՆ), Սալոնիկի Արիստոտելի անվան համալսարանը (Հունաստան), Վարշավայի համալսարանը (Լեհաստան), Դոնեցկի ազգային համալսարանը (Ուկրանիա), Թբիլիսիի Ի. Ջավախիշվիլու անվան պետական համալսարանը (Վրաստան), Ախալցխայի պետական կրթական համալսարանը (Վրաստան), Ն. Գումիլյովի անվան Եվրասիական ազգային համալսարանը (Ղազախստան), Մադոննա Գուարդիանի անվան Թուրքմենական պետական համալսարանը (Թուրքմենստան), Հալեպի համալսարանը (ՍԱՀ), Կահիրեի համալսարանը (Եգիպտոս), Քուվեյթի համալսարանը (Քուվեյթ):

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ստորագրվել է 11 պայմանագիր արտասահմանյան բուհերի հետ, որոնց թվում են՝ Շվեյցարական ակադեմիական կոլկասյան ցանցը (Շվեյցարիա), Թեհրանի հումանիտար և մշակութային գիտությունների ինստիտուտը (Իրան), Գիլանի համալսարանը (Իրան), Կադիսի համալսարանի (Իսպանիա), Տվերի պետական համալսարանը (Ռուսաստան), Պերմի պետական ազգային հետազոտական համալսարանի (Ռուսաստան) հետ և այլն: Վերակնքվել է Աթենքի ազգային և կապոդեստրիան համալսարանի (Հունաստան) հետ ստորագրված պայմանագիրը:

Ինչպես և նախորդ տարիներին, 2011/2012 ուստարում Երևանի պետական համալսարանն ակտիվորեն մասնակցել է տարբեր միջազգային գիտաժողովների, սեմինարների և քննարկումների կազմակերպմանը: Միննույն ժամանակ, ԵՊՀ միջազ-

գային համագործակցության վարչությունը աջակցել է ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունների և ՀՀ-ում հավատարմագրված դեսպանությունների կողմից տարբեր գիտակրթական միջոցառումների, սեմինարների, կրթական ծրագրերի և տեղեկատվական ցուցահանդեսների կազմակերպմանը:

ԵՊՀ-ի և արտասահմանյան համալսարանների ու հաստատությունների միջև կնքված պայմանագրերի շրջանակներում հաշվետու տարում խորացվել է համագործակցությունը՝ ընդգրկելով երկկողմ հետաքրքրության տարբեր ոլորտներ: Այսպես՝ 2011/2012 ուստարում ԵՊՀ են այցելել Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանի (Ռուսաստան) արևելագիտության ֆակուլտետի ներկայացուցիչները, Կահիրեի պետական համալսարանի (Եգիպտոս) պատվիրակությունը: Շարունակվել է Սանկտ-Պետերբուրգի համալսարանի մագիստրատուրայում և ասպիրանտուրայում ԵՊՀ շրջանավարտների ուսուցումը «Օսմանագիտություն» մասնագիտությամբ: Այսօր այդ մասնագիտությամբ Ս. Պետերբուրգի համալսարանի ասպիրանտուրայում ուսումը շարունակում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 2011/2012 ուստարվա շրջանավարտներից մեկը: ԵՊՀ պատմության ֆակուլտետի մագիստրատուրայի երեք շրջանավարտ նույնպես ուսումը շարունակում են հիշյալ համալսարանի ասպիրանտուրայում:

Հաշվետու ժամանակաշրջանում Ս. Պետերբուրգի գիտական խորհրդի որոշմամբ ԵՊՀ ռեկտորին շնորհվել է այդ համալսարանի «Պատվավոր դոկտոր» կոչումը:

Արդեն նշվեց, որ ԵՊՀ-ի և Ազգերի բարեկամության ռուսական համալսարանի միջև ԱՊՀ երկրների ցանցային համալսարանի համագործակցության շրջանակներում 2010/2011 ուսումնական տարում Ռուսաստան գործուղված ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի չորս ուսանողները պետական քննությունները հաջող հանձնելուց հետո ստացել են երկու բուհերի դիպլոմ: 2011/2012 ուսումնական տարում ԱՊՀ երկրների ցանցային համալսարանի համագործակցության շրջանակներում Ռուսաստան է գործուղվել 12 ուսանող՝ միջազգային հարաբերությունների, տնտեսագիտության, ռուս բանասիրության ֆակուլտետներից: 2012 թ-ից ԵՊՀ-ն անդամակցում է նաև ԱՊՀ երկրների ցանցային համալսարանի տեխնիկական կոնսորցիումին: Համագործակցության ոլորտում ավելացել է նոր մասնագիտացում՝ «Ինֆորմացիոն կառավարող համակարգեր»:

Արդյունավետ է եղել համագործակցությունը ԵՊՀ և գերմանական բուհերի միջև: ԵՊՀ և Ռոստոկի համալսարանի համագործակցության շրջանակներում 2011/2012 ուստարում ևս Ռոստոկի համալսարանի օրգանական քիմիայի ամբիոն են մեկնել ԵՊՀ ուսանողներ՝ փորձարարական աշխատանքների, մագիստրոսական, ասպիրանտական և դոկտորանտուրայի դասընթացներին մասնակցելու նպատակով:

2011/2012 ուստարում շարունակվել է համագործակցությունը Արիզոնայի նահանգային համալսարանի (ԱՄՆ), Մոնպելիե 1, Մոնպելիե 3 համալսարանների հետ (Ֆրանսիա), սկսվել է համագործակցությունը Լիլի համալսարանի հետ (Ֆրանսիա):

Հաշվետու ուսումնական տարում անցկացված առավել ուշագրավ միջազգային միջոցառումներից էր 2012 թ. մայիսի 18-ին ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության և ՀՀ-ում Ղազախստանի Հանրապետության դեսպանության նախաձեռնությամբ կազմակերպված միջազգային գիտաժողովը՝ «Եվրասիականություն. արժե-համակա՞րգ, թե՞ զարգացման ճանապարհ (Ղազախստանի օրինակով)» թեմայով:

Վերջին 5 տարիների ընթացքում Երևանի պետական համալսարանը ակտիվ մասնակցել է ՏԵՄՊՈՒՄ-ի շրջանակներում նախագծերի մշակմանն ու իրականացմանը: 2011/2012 ուստարում հաջողությամբ շարունակվել են ՏԵՄՊՈՒՄ, Էրազմուս Մունդուս դրամաշնորհային ծրագրերը:

2011/2012 ուստարում ALRAKIS ծրագրի շրջանակներում ԵՊՀ-ում մեկնարկել է «Էրազմուս Մունդուս, գործողություն 2. երրորդ երկրի բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ գործընկերություն» դրամաշնորհը, որի նպատակն է ընդլայնել ուսանողների, դասախոսների և հետազոտողների փոխանակումները և աջակցել շարժունակությանը ոչ ԵՄ անդամ պետություններից դեպի ԵՄ անդամ երկրներ: 2011 թ-ից ԵՊՀ-ում ՏԵՄՊՈՒՄ ծրագրի շրջանակներում իրականացվում է «Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում համալսարան-ձեռնարկություն գործընկերությանն ուղղված վերապատրաստման հնարավորություններ» դրամաշնորհը, որի հիմնական նպատակն է ընդլայնել համալսարանների հնարավորությունները հիշյալ երկրներում՝ համաձայն հասարակության և շուկայական տնտեսության պահանջների՝ հիմնված համապատասխան կրթության վրա:

Հաշվետու ուստարում ԵՊՀ մասնագետները, ինչպես նաև բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողները մասնակցել են տարբեր գիտա-

կան միջոցառումների, սեմինարների, արտասահմանյան գիտակրթական ծրագրերի: Իրականացվել են նաև միջբուհական փոխանակման ծրագրեր: Միջազգային համագործակցության վարչությունն ապահովել է համալսարանականների՝ արտասահման գործուղվելն ու գիտաուսումնական փոխանակումները: Հաշվետու տարում համալսարանականներն առավել հաճախ գործուղվել են Ռուսաստան, Վրաստան, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա: 2011/2012 ուսումնական տարում ընդհանուր առմամբ իրականացվել է 555 անձ/գործուղում: 2011/2012 ուսումնական տարում գործուղվել են 325 մասնագետ, 185 ուսանող և ասպիրանտ: Համալսարանի վարչական կազմից արտասահման է գործուղվել 45 անձ:

2011/2012 ուստարում ԵՊՀ ֆակուլտետներում սովորել են 491 օտարերկրացի ուսանող և ասպիրանտ, այդ թվում՝ 29 ուսանող ԵՊՀ օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետում (ՕՔՆՖ), բակալավրիատում՝ 225 (198-ը՝ վճարովի, 27-ը՝ անվճար հիմունքներով), մագիստրատուրայում՝ 62 (51-ը՝ վճարովի, 11-ը՝ անվճար հիմունքներով), ասպիրանտուրայում՝ 104 (103-ը՝ վճարովի, 1-ը՝ անվճար հիմունքներով) և հեռակա՝ 59 ուսանող: Վճարովի հիմունքներով սովորող օտարերկրացիներից գանձված ուսման վարձը կազմել է 240.800.000 դրամ:

2012 թ. ընթացքում «Գալուստ Կյուլպենկյան» հաստատության կողմից հատուցվել է համալսարանի 37 երիտասարդ գիտնականի կարճաժամկետ և երկարաժամկետ արտասահմանյան գործուղումների ծախսը՝ ընդամենը 52.431 ԱՄՆ դոլարի չափով, շարունակվել է ԵՊՀ (կենսաբանության ֆակուլտետ)-C1B10 (Պորտոյի համալսարան)–«Գալուստ Կյուլպենկյան» եռակողմ պայմանագրի շրջանակներում ուսումնական և գիտական փոխանակումների ֆինանսավորումը, որի համար «Գ. Կյուլպենկյան» հիմնադրամը ԵՊՀ մասնակիցներին տրամադրել է 12.412 եվրո:

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

1. Հասարակայնության հետ տարվող աշխատանքներ

ԵՊՀ հասարակայնության հետ կապերի ոլորտը հանդիսանում է ԵՊՀ զարգացման ռազմավարական ուղղությունն և արտացոլված է ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2010-2014 թթ.) համապատասխան դրույթներում: ԵՊՀ՝ հասարակայնության հետ տարվող աշխատանքները համակարգվում են հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության կողմից: Վարչությունն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

- համագործակցություն տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների հետ, միջոցառումների լուսաբանում,
- «Երևանի համալսարան» պաշտոնաթերթի հրատարակում,
- հանրային կապերի ոլորտին վերաբերող նյութերի տպագրություն,
- մեթոդական աշխատանքների իրականացում,
- ինտերնետային ռեսուրսների զարգացում, համացանցային տիրույթում ԵՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածում,
- ֆոտո և տեսանյութերի ստեղծում և արխիվացում,
- պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների և տարբեր կառույցների հետ աշխատանքներ:

Համագործակցություն տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների հետ, միջոցառումների լուսաբանում

Հետևողական աշխատանք է կատարվել ԵՊՀ-ում հանրային նշանակության միջոցառումների պատշաճ լուսաբանման ուղղությամբ: Համալսարանական օղակների հետ աշխատանքներ են տարվել «ԵՊՀ-ում հանրային նշանակություն ունեցող միջոցառումների կազմակերպման, իրազեկման և հասարակայնության հետ տարվող աշխատանքների ուղեցույց»-ի պատշաճ կիրառման ուղղությամբ: ԶԼՄ-ների, հասա-

րակական կազմակերպությունների և քաղաքացիների կողմից ԵՊՀ-ին հասցեագրված «Տեղեկատվություն ստանալու հարցումներին» օրենքով սահմանված ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:

2011/2012 ուստարվա ընթացքում վարչությունը ստացել է շուրջ 250 հանրային նշանակության միջոցառման հայտ: Ավելի քան 100 մամուլի հաղորդագրություն է ուղարկվել ՁԼՄ-ներին:

Իրականացվում է նաև տպագիր ՁԼՄ-ներում և ինտերնետային կայքերում համալսարանի, կրթության և գիտության ոլորտի կարևոր խնդիրների մասին հրապարակված նյութերի մոնիթորինգ: Տպագիր լրատվամիջոցներում ԵՊՀ-ի մասին հրապարակված նյութերի քանակը հաշվետու ժամանակահատվածում 540-ն է, իսկ ինտերնետային կայքերում ԵՊՀ-ին անդրադարձած նյութերի թիվը՝ 704: Համապատասխան նյութերը յուրաքանչյուր օր առավոտյան ներկայացվում են ԵՊՀ ղեկավարությանը, իրականացվում է նյութերի վերլուծություն:

ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահի հեռուստաէկրաններին յուրաքանչյուր աշխատանքային օր տեղադրվել են համալսարանում կայանալիք միջոցառումների մասին տեղեկատվությունը և հայտարարությունները, որոնց ընդհանուր թիվը կազմել է ավելի քան 250: Հետևողական աշխատանք է կատարվել ԵՊՀ խորհրդանշանների (գերբ, լոգո, դրոշ, օրհներգ) մասսայականացման ուղղությամբ:

«Երևանի համալսարան» պաշտոնաթերթի և այլ նյութերի հրատարակում

«Երևանի համալսարան» ամենամսյա պաշտոնաթերթը հրատարակելուն զուգընթաց տպագրվել են նաև ուղեցույցներ, բուկլետներ ու տեղեկատվական գրքույկներ: Խմբագրվել, սրբագրվել և տպագրության է պատրաստվել ԵՊՀ 2010/2011 ուստարվա գործունեության հաշվետվությունը, պատրաստվել է ԵՊՀ ֆակուլտետները և կենտրոնները ներկայացնող բուկլետ անգլերենով:

2011/2012 ուստարվա ընթացքում լույս է տեսել «Երևանի համալսարան» թերթի 10 համար՝ միջինը 32 էջ ծավալով, յուրաքանչյուր համարում՝ 40-45 նյութ (ուստարվա կտրվածքով՝ 400-450 նյութ, այդ թվում՝ վերլուծություններ, հարցազրույցներ, կայացած միջոցառումների լուսաբանումներ և այլն):

Մեթոդական աշխատանքների իրականացում

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատվել են ԵՊՀ հանրային կապերի հայեցակարգը և «ԵՊՀ հանրային կապերի ոլորտում իրականացվող աշխատանքների արդի վիճակը» թեմայով զեկույցը: Հայեցակարգի նպատատակն է հստակեցնել ԵՊՀ հանրային կապերին վերաբերող սկզբունքային մոտեցումները, սահմանել աշխատանքային գերակա ուղղությունները, հանրային կապերի աշխատանքներին մասնակից ստորաբաժանումների շրջանակը, հանրային կապերի ոլորտում իրականացվող աշխատանքների տեսլականը:

Անցկացվել են ԵՊՀ արտաքին իմիջի վերաբերյալ Երևանի բնակչության պատկերացումների բացահայտմանն ուղղված, հեռախոսային հարցման մեթոդով իրականացվող հետազոտության 7-րդ և 8-րդ փուլերը: Հետազոտությունը շարունակական (պարբերական) բնույթ ունի և անցկացվում է վեց ամիսը մեկ:

Վարչության մի շարք աշխատակիցներ ներգրավվել են ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի շրջանակում կատարվող ինքնավերլուծության՝ հանրային պատասխանատվությանը վերաբերող հատվածի մշակման աշխատանքներում:

Վարչության աշխատակիցները ԵՊՀ ղեկավարությանն են ներկայացրել ուսումնառության սկզբում ուսանողներին տրվող «Առաջին կուրսեցու ուղեցույցի» բովանդակության և վարչության կողմից պատրաստված տարաբնույթ տեղեկատվական թերթիկների և բուկլետների մասին մասնագիտական առաջարկություններ: ԵՊՀ մշակույթի կենտրոնի կազմակերպած միջոցառումների վերաբերյալ անցկացվել է հետադարձ կապի վերլուծություն: Հետազոտություն է իրականացվել ԵՊՀ ուսանողների ազատ ժամանցի վերաբերյալ:

Ինտերնետային ռեսուրսների զարգացում, համացանցում ԵՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածում

Պարբերաբար թարմացվել է ԵՊՀ պաշտոնական ինտերնետային կայքը՝ www.y-su.am հասցեով, կայքում օպերատիվորեն կազմակերպվել է տեղեկատվության տեղադրումը: Կայքի «Նորություններ» բաժնում հայերեն, ռուսերեն, անգլերեն հրա-

պարակվել է 1041 նյութ: Ապահովվել է առցանց հետադարձ կապ, ինչպես նաև մշակվել և վերլուծվել են էլեկտրոնային փոստով ստացված նամակները: ԵՊՀ կայքում գործում է «Հարց-պատասխան» բաժինը, որի միջոցով ստացված բազմաբնույթ (1178՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն) նամակներին ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների օգնությամբ հնարավորինս սեղմ ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:

Ամենօրյա օպերատիվ աշխատանքի շնորհիվ և կայքի այցելուների հետ ինտերակտիվ կապ ապահովելու արդյունքում նախորդ տարվա այս ժամանակահատվածի համեմատ կայքի այցելուների թիվը աճել է՝ հասնելով օրական միջինը 3500-ի:

Ամբողջությամբ գործարկվել են ԵՊՀ ֆակուլտետների համար նախատեսված առանձին կայքերը, որոնք տեղադրվել են www.yasu.am/faculties հասցեում: Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետների կայքերում տեղադրվել են 1631 դասախոսի տվյալներ, 1074 դասախոսի լուսանկարներ, 1238 հայերեն և 1187 անգլերեն կենսագրական տվյալներ, 12004 գիտական հրապարակումների մասին տեղեկություններ:

Գործարկվել են վարչական փաստաթղթերի (<http://doc.yasu.am>), կրթական ոլորտին վերաբերող փաստաթղթերի (<http://edu.yasu.am>), ԵՊՀ մասնագիտական խորհուրդների (<http://yasu.am/council>), հայ մամուլի պատմության (<http://www.yasu.am/oldpress>), շրջանավարտների և կարիերայի կենտրոնի (<http://careercenter.yasu.am>), ռուսական կենտրոնի (<http://russia.yasu.am>), մշակույթի կենտրոնի (<http://culture.yasu.am>), ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի (<http://yasuib.am>) կայքերը:

Աշխատանքներ են տարվել քիմիայի ֆակուլտետի բլոգի, իրավագիտության ֆակուլտետի Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի, «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբի կայքերի գործարկման ուղղությամբ:

Նախագծվել է «Գիտություն» կայքէջը, որը ներառում է ԵՊՀ գիտական հանդեսները, գիտական ենթակառուցվածքները, կայանալիք գիտական միջոցառումները և այլ տեղեկատվություն:

Facebook, Google+, Twitter սոցիալական ցանցերում վարվել են ԵՊՀ-ի էջերը, մասնավորապես facebook-ի (<http://www.facebook.com/yasu.am>) տիրույթում բազմաթիվ այցելուներ և բուռն քննարկումներ են ծավալվում (ԵՊՀ Facebook-ի էջի հետևորդների թիվը հասել է 5822-ի):

Առկա և հեռակա ուսուցման համակարգերում դիմորդների համար ԵՊՀ ինտեր-նետային կայքում տեղադրվել է համապատասխան տեղեկատվություն, իսկ հեռակա ուսուցման ընդունելության քննությունների պատասխանների 30 ձևաթուղթ՝ օրա-կան երկու անգամ, օպերատիվ կերպով տեղադրվել է կայքում: «ԵՊՀ մասնագիտա-կան խորհուրդներ» կայքում գիտական ատենախոսությունների պաշտպանություն-ների և քննարկումների վերաբերյալ տեղադրվել են օպերատիվ տեղեկատվություն և ավելի քան 200 սեղմագիր:

2012 թվականի օգոստոսին Վեբոմետրիքսը (Webometrics Ranking of World Unisvesuties) հրապարակել է բուհական համաշխարհային վարկանշային աղյուսակը: ԵՊՀ-ի վարկանիշը կազմում է 2051, ըստ որի՝ ԵՊՀ-ն գլխավորում է ՀՀ բուհերի ցանկը: Ինչպես տարեսկզբին, այնպես էլ ներկայումս ԵՊՀ-ն մտնում է աշխարհի համալսա-րանների լավագույն 10 տոկոսի մեջ: Ռեյտինգավորման համակարգի չորս բաղադրիչ-ներից երկուսը վերաբերում են կայքի ծավալներին, որոնց ուղղությամբ արձանա-գրվել է զգալի առաջընթաց: Կայքի «Ներկայացվածությունը» 2011 թ. հուլիսի համե-մատ 3120-րդ տեղից բարձրացել է 850-ի, իսկ «Կայքի բացությունը»՝ 9583-րդ տեղից՝ 1588-ի:

Հակերային մի շարք հարձակումներից հետո, խորհրդակցելով ԵՊՀ տեղեկա-տվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության մասնագետների հետ, կայքի անվտանգությունն ապահովելու նպատակով դոմեյնային տիրույթը «Arminco» ՓԲԸ-ի սերվերային համակարգից տեղափոխվել է ԵՊՀ սերվեր:

Ֆոտո և տեսանյութերի ստեղծում և արխիվացում

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 417 լուսանկարահանում (միջո-ցառումներ, թերթի համար ֆոտոսեսիաներ և այլն), ընդհանուր թվով՝ 26600 լուսա-նկար, իսկ տեսանկարահանված միջոցառումների տևողությունը կազմում է ավելի քան 6000 րոպե, որոնք ամբողջությամբ թվանշայնացվել և արխիվացվել են DVD սկավառակների վրա:

Թվանշայնացվել և արխիվացվել են VHS և SVHS ձևաչափով նկարահանված արխիվային նյութերը՝ շուրջ 300 ժամ, 1990-2006 թթ. գունավոր ֆոտոժապավենով լուսանկարահանված նյութերը՝ ընդհանուր թվով 10000 հատ:

Վարչության համապատասխան բաժնի աշխատակիցները ԵՊՀ-ում կայացած միջոցառումների լուսանկարներով ապահովել են ինչպես համալսարանական, այնպես էլ հանրապետական մամուլը:

Վարչությունն աջակցել է ԵՊՀ 2011/2012 ուստարվա գործունեությունը ներկայացնող «Այս ճամփան վախճան չունի» ֆիլմի ստեղծման աշխատանքներին:

Վարչության և «Օրդֆիլմ» կինոարտադրող ընկերության համագործակցության արդյունքում համատեղ նկարահանվել է մայր բուհի անցած ավելի քան 90-ամյա ուղին ներկայացնող «Իմ տունն այստեղ է» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) փաստավավերագրական ֆիլմը:

2. Տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում

2011/2012 ուսումնական տարվա ընթացքում շարունակվել են աշխատանքները ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման ուղղությամբ: Այդ աշխատանքները պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնական խմբի.

- ներհամալսարանական համակարգչային ցանցի և համալսարանական տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում,
- համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի սպասարկում և արդիականացում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն ու զարգացումը ԵՊՀ-ում ունեն խիստ կարևոր ռազմավարական նշանակություն և գտնվել են անմիջական ուշադրության ներքո: Համապատասխան աշխատանքներն իրականացվել են ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության կողմից:

Ներհամալսարանական համակարգչային ցանցի և համալսարանական տեղեկատվական համակարգերի սպասարկում և զարգացում

ԵՊՀ համակարգչային ցանցը Հայաստանի բուհական համակարգում զբաղեցնում է առաջատար դիրք և առանձնանում է թե՛ իր չափերով և թե՛ տեխնիկական հազեցվածությամբ և համապատասխան որակական բնութագրիչներով: Հաշվետու ուստարում 8-րդ մասնաշենքում նույնպես անցկացվեց օպտիկամանրաթելային

կապուղի, որի արդյունքում ներկայումս Ալեք Մանուկյան 1 և Աբովյան 52 հասցեների բոլոր մասնաշենքերը միացված են համալսարանական կենտրոնական սերվերին ԵՊՀ-ի սեփական օպտիկամալուխային կապուղիներով, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է մի քանի կիլոմետր: Այսպիսով, ԵՊՀ ներքին ցանցի ներկա ֆիզիկական տոպոլոգիան ներկայացնում է երկու ցանցերի համադրություն՝ օղակաձև և աստղային, որոնք իրենց հերթին բաժանված են տարբեր վիրտուալ ներքին ցանցերի: Վերջինս թույլ է տալիս ցանցում ունենալ տարբեր աշխատանքային խմբեր և միջավայրեր և իրականացվում է ներցանցային 13 Cisco ուղղորդիչների միջոցով:

Համապատասխան նախապատրաստական աշխատանքներ են կատարվել նաև Իջևանի մասնաճյուղի, ԵՊՀ հյուրերի տան, Կիևյան փողոցի՝ քաղաքաշտպանության ամբիոնի և Ծարավ Աղբյուրի փողոցի մասնաշենքերը վարձակալված օպտիկամանրաթելային կապուղիներով կենտրոնական սերվերին միացնելու նպատակով:

Հաշվետու ուստարում ներհամալսարանական ցանցի ընդլայնման շրջանակներում ԵՊՀ ցանցին են միացվել ինչպես նոր, այնպես էլ նախկինում ձեռք բերված համակարգիչները (շուրջ 220 համակարգիչ), վերանորոգված մասնաշենքերում և այլ լսարաններում և աշխատասենյակներում ԵՊՀ համակարգչային ցանցին միանալու նպատակով անցկացվել է նոր համակարգչային ցանց: ԵՊՀ ներքին ցանցին լարանցմամբ միացված ընդհանուր կետերի (սարքերի) թիվը հասել է գրեթե 2000-ի:

Աշխատանքներ են տարվում նաև մասնաշենքերում ազատ անլար ինտերնետ հասանելիության ապահովման ուղղությամբ: Հաշվետու ուստարում բազմաթիվ մասնաշենքերում տեղադրվել են անլար WiFi կապի ցրիչներ, որոնց ընդհանուր թիվը ներկայումս հասնում է 40-ի:

Վերանորոգվել է ԵՊՀ սերվերային սենյակը, տեղադրվել են նոր սերվերներ, այլ անհրաժեշտ սարքավորումներ և անխափան սնուցման սարքեր. վերջիններս խիստ էական նշանակություն ունեն էլետրական հոսանքի մատակարարման ներկա վիճակի (հաճախակի անջատումների և տատանումների) պայմաններում:

Համալսարանի ինտերնետ կապի թողունակությունը եղել է միջինը 18 Mb/s: Ինտերնետ կապի տրամադրման քարտային համակարգից փորձնական անցում է կատարվել էլեկտրոնային փոստի հասցեով ինտերնետից օգտվելու գործընթացին՝ օրական չափաբաժինը միջինը 20 անգամ բարձրացնելու պայմաններում: Առկա

արդյունքները հնարավորություն են ընձեռում 2013 թվականին անցնել գրեթե անսահմանափակ ծավալով ինտերնետի օգտագործմանը:

Ընդլայնվել և վերամշակվել է ներքին վարչական գործառնությունների ավտոմատացման համակարգը: Իրականացվել են մշակումներ ԵՊՀ տարբեր ստորաբաժանումներում առկա տվյալների շտեմարանների ինտեգրման և միասնական համակարգի ստեղծման ուղղությամբ: Իրականացվել են մշակումներ հաշվապահական ծրագրերի կենտրոնացված աշխատանքների համակարգի ստեղծման ուղղությամբ:

Հաշվետու ուստարում բազմաթիվ հակերային հարձակումներից հետո որոշում կայացվեց ԵՊՀ-ի սերվերային համակարգի և համապատասխան անձնակազմի ուժերով ապահովել համալսարանական պաշտոնական կայքի և մի շարք ենթակայքերի հոստինգը: Հիմնական կայքը և շուրջ 20 ենթակայք 2012 թ. մարտ-ապրիլ ամիսներին տեղակայվեցին ԵՊՀ սերվերում, կատարվեցին համապատասխան ծրագրային ապահովման աշխատանքներ, որոնց արդյունքում տապալվել են ԵՊՀ կայքէջի բոլոր հակերային հարձակումների փորձերը:

ԵՊՀ աշխատակիցների համար բացվել է շուրջ 500 նոր էլեկտրոնային փոստի հասցե ysu.am տիրույթում: Ապահովվել են ԵՊՀ էլ. փոստի սերվերի աշխատանքները: Ներկայումս գրանցված է շուրջ 1600 աշխատակցի էլ. փոստի հասցե:

Հաշվետու ուստարում առաջին անգամ ներդրվեց մի համակարգ, որը պետք է ապահովեր պետական քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության ողջ ընթացքի ձայնագրությունը, իսկ վերջինիս շնորհիվ ուսանողները կարող էին բողոքարկել այդ քննությունների արդյունքները: ԵՊՀ-ն միակ բուհն էր, որ այս ծավալով կիրառեց տեխնիկայի վերջին ձեռքբերումները: Համապատասխան լսարաններում տեղադրվեց 40 IP տեսախցիկ, որոնց միջոցով ապահովվել է բոլոր ֆակուլտետներում պետական քննությունների (այդ թվում՝ ավարտական աշխատանքների պաշտպանության) ողջ ընթացքի տեսահեռարձակում ԵՊՀ ներքին ցանցում և քննությունների տեսաձայնագրում (որոշ օրերի միաժամանակ մի քանի ֆակուլտետում ընթանում էին քննություններ): Կատարվել են քննությունների ընթացքի փորձնական ինտերնետային հեռարձակումներ:

Համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի սպասարկում և արդիականացում

Համակարգչային պահեստամասերից հավաքվել և շահագործման է հանձնվել 105 նոր համակարգիչ: Գնվել է շուրջ 70 շարժական համակարգիչ: Կատարվել են ընթացիկ համակարգչային տեխնիկայի վերանորոգման աշխատանքներ (վերանորոգվել են շուրջ 360 համակարգիչ և համակարգչային տեխնիկա, այդ թվում նաև տեղադրվել են ծրագրային ապահովումներ): Ապահովվել է տեխնիկայի սպասարկումը տարբեր միջոցառումների ժամանակ:

Ուսումնական կենտրոններում և ֆակուլտետներում շարունակվել են անվտանգության տեսախցիկների տեղադրման աշխատանքները: Տեղադրվել է անվտանգության 12 տեսախցիկ մարզահամալիրի, ֆիզիկայի, քիմիայի, ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետների մասնաշենքերում: Իրականացվել են անվտանգության տեսախցիկների սպասարկման աշխատանքներ:

Համապատասխան մասնագետները մշտապես աջակցել են ԵՊՀ աշխատակիցներին համակարգչային տեխնիկայի շահագործման հետ կապված խնդիրներում: Տրամադրվել է համակարգչային ծրագրերին և տեխնիկային վերաբերող խորհրդատվություն (շուրջ 900 այցելություն և խորհրդատվություն), տարվել են բացատրական աշխատանքներ համակարգչային անվտանգության ուղղությամբ:

ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ

1. Ուսանողական կազմակերպություններ և ուսանողների հետ տարվող աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ուսանողական խորհուրդը շարունակել է իր գործունեությունը՝ պաշտպանելով ուսանողների շահերն ու իրավունքները, ապահովելով ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, մասնակցելով ուսումնական գործընթացի և այլ աշխատանքների կազմակերպմանը և աջակցելով ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը:

ՈՒԽ աշխատանքներում էական կարևորություն ունի ուսանողներին գործող կրթական համակարգի, նրանց իրավունքների և պարտականությունների և ներհամալսարանական կյանքի մասին իրազեկելու խնդիրը: Աշխատանքներ են իրականացրել ուսանողությանը կրեդիտային համակարգին ծանոթացնելու և այն ավելի ընկալելի դարձնելու ուղղությամբ: Կազմակերպվել են «Բոլոնիայի գործընթացը Հայաստանում» դասընթացները, որոնց ընթացքում ուսանողները իրազեկվել են գործընթացի մանրամասների և իրավական նորմերի մասին: Կազմակերպվել են քննարկումներ, կլոր սեղաններ, սեմինարներ՝ ԵՊՀ ուսանողներին, հատկապես 1-ին կուրսեցիներին իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու համար: Տպագրվել է «Ալեք Մանուկյան-1» ՈՒԽ պարբերականի հերթական համարը, աշխատանքներ են տարվել նոր կայքի ստեղծման ուղղությամբ:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել ուսանողների սոցիալական վիճակը բարելավելու ուղղությամբ, մասնավորապես՝ նախորդ տարվա պես ՈՒԽ-ի աջակցությամբ շուրջ 1000 ուսանողի տրվել են ուսման վարձի զեղչեր, կրթաթոշակներ, ինչպես նաև ցուցաբերվել է այլ աջակցություն (ամառային հանգիստ և այլն):

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են արդեն ավանդական դարձած ուսանողական մարզական միջոցառումները. կազմակերպվել են ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի, շախմատի ներբուհական առաջնություններ: Հաղթողներին տրվել են մեդալներ և փոխանցվել գավաթներ: Կազմակերպվել է շախմատի միջբուհական առաջնություն՝ նվիրված ՀՀ 20-ամյակին, որը ճանաչվել է տարվա լավագույն միջբուհական միջոցառումը և արժանացել ՀՀ վարչապետի շնորհակալագրի:

Կազմակերպվել են նաև մի շարք հանդիպումներ մշակույթի և արվեստի գործիչների հետ, կինոդիտումներ, համերգներ, ցուցահանդեսներ և այլն: Մշակութային կյանքը բազմազանեցնելու նպատակով Երևանի մի շարք թատրոնների և նվագախմբերի հետ ձեռք բերված պայմանավորվածությունների արդյունքում ուսանողներին տրամադրվել են անվճար տոմսեր: Կազմակերպվել են մի շարք ինտելեկտուալ մրցույթներ:

2011 թ. նոյեմբեր 17-ին՝ Ուսանողության միջազգային օրը, կազմակերպվել է «Ուսանող-2011» մրցանակաբաշխությունը, որի ընթացքում ԵՊՀ մշակույթի կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել է համերգ, և հասարակական ակտիվություն դրսևորած և ԵՊՀ պատիվը բարձր պահած ուսանողները պարգևատրվել են ԵՊՀ ՈԻԽ մեդալներով: Այդ օրը իրականացվել է նաև «Ուսանողական ռեկտորատ» ծրագիրը. հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված ուսանողները մեկ օրով «զբաղեցրին» ռեկտորի, պրոռեկտորների և դեկանների պաշտոնները և ներկայացրին իրենց առաջարկություններն ու մոտեցումները համալսարանական մի շարք խնդիրների վերաբերյալ:

Աշխատանքներ են իրականացվել նաև ուսանողական միջազգային համագործակցության ուղղությամբ: Ուսանողական խորհրդի օժանդակությամբ մի շարք ուսանողներ մեկնել են արտերկիր (Ռուսաստան, Վրաստան, Ղազախստան, Լեհաստան և այլն)՝ մասնակցելու գիտաժողովների, ֆորումների, ինտելեկտուալ խաղերի, մրցումների և այլն: ՈԻԽ նախագահ Յ. Ակոպյանը մասնակցել է Մ. Լոմոնոսովի 300-ամյակին նվիրված միջոցառումներին և պարգևատրվել է Լոմոնոսովի անվան մեդալով: 2012 թ. հունվարին կազմակերպվել էր հայ-վրացական ձմեռային դպրոց, որին մասնակցել է շուրջ 80 ուսանող Հայաստանից և Վրաստանից:

Ակտիվ են եղել ՈԻԽ աշխատանքները ուսանողների հայրենասիրական դաստիարակության աշխատանքների ուղղությամբ: Կազմակերպվել են տարբեր արշավներ, իրականացվել է ավանդական ծառատունկ ԼՂՀ Քաշաթաղի շրջանի համալսարանական պուրակում և մի շարք այլ միջոցառումներ:

Աշխատանքներ են ծավալվել նաև ՀՀ տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում: Ուսանողական խորհուրդը ակտիվորեն համագործակցել է նաև ՀՀ կրթության և գիտության, մշակույթի, սպորտի և երիտասար-

դության հարցերի, սփյուռքի նախարարությունների, ՀՀ Ազգային ժողովի կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի հանձնաժողովի, Երևանի քաղաքապետարանի հետ: ՈՒԽ նախագահ Յ. Ակոպյանը՝ որպես ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի անդամ, ակտիվորեն ներգրավված է եղել երիտասարդական քաղաքականության տարբեր խնդիրների վերաբերող քննարկումներում: Շարունակվել է համագործակցությունը նաև Հայ Առաքելական եկեղեցու հետ, որի շրջանակներում կազմակերպվել են բազմաթիվ հանդիպումներ, այցելություններ Հայաստանում գտնվող եկեղեցիներ և այլ պատմամշակութային վայրեր:

ԵՊՀ ՈՒԽ-ն՝ որպես Հայաստանի ազգային ուսանողական ասոցիացիայի և Հայաստանի երիտասարդության ազգային խորհրդի անդամ, մասնակցել է նաև այդ կազմակերպությունների աշխատանքներին: Հաշվետու ուստարում ԵՊՀ ՈՒԽ-ն Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և հասարակական տարբեր կազմակերպությունների հետ կազմակերպել է բազմաթիվ միջոցառումներ. մասնավորապես՝ ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված միջոցառումների շարք, «Ուսանողական ինքնակառավարումը և առաջնորդությունը» թեմայով սեմինար-դասընթաց, հակակոռուպցիոն միջոցառումների շարք և այլն:

2011/2012 ուստարում ԵՊՀ ուսանողական գիտական ընկերությունն իրականացրել է կանոնադրային պահանջներից բխող միջոցառումներ, սատարել է ուսանողության գիտական և կրթական նախաձեռնություններին, նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը, ինչի նպատակով կազմակերպվել է 361 միջոցառում, այդ թվում՝ հանրապետական, միջբուհական և ֆակուլտետային գիտաժողովներ, սեմինար-քննարկումներ, հանդիպում-դասախոսություններ, ֆիլմերի դիտումներ, օլիմպիադաներ, ինտելեկտուալ խաղ, բանավեճեր, դատախաղեր և այլն:

Հանրապետական և միջբուհական գիտաժողովներից կարելի է առանձնացնել ՀՀ և ԼՂՀ 20-ամյակներին, Հայոց ցեղասպանության 97-րդ տարելիցին, ԵՊՀ ռոմանագեմանական բանասիրության ֆակուլտետի 20-ամյակին, սոցիոլոգիայի ֆակուլտետի 7-ամյակին և կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի 25-ամյակին, ավստրիացի բնագետ Գրեգոր Մենդելի 190-ամյակին, պատմահայր Մովսես Խորենացու 1600-ամյակին

նվիրված գիտաժողովները, ինչպես նաև Հնագիտաազգագրական երիտասարդական 1-ին հանրապետական, սփյուռքագիտության հիմնախնդիրներին նվիրված գիտաժողովները:

ՈԻԳԸ-ի կազմակերպած գիտաժողովների ընթացքում հնչել է շուրջ 700 գիտական զեկուցում: ՈԻԳԸ անդամները մասնակցել են նաև ոչ ուսանողական գիտաժողովների. մասնավորապես՝ ԵՊՀ ՈԻԳԸ նախագահ Մ. Մալխասյանը 2011 թ. դեկտեմբերի 13-ին զեկուցմամբ հանդես է եկել Երևանի պատմության հիմնախնդիրներին նվիրված 3-րդ հանրապետական գիտաժողովում, իսկ 2012 թ. ապրիլի 28-ին՝ «Բնագիտությունը 21-րդ դարում. ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ» համահայկական կրթական 3-րդ գիտաժողովում:

ՈԻԳԸ միջոցառումներից կարևոր էր «Գիտական աշխատանքներ կատարելու հմտությունների ուսուցման» ուսուցողական ծրագիր-դասընթացը, որի շրջանակներում սեմինարներ վարեցին այս բնագավառում մեծ փորձ ունեցող անվանի գիտնականներ:

Ամրապնդվել է համագործակցությունը Երևանում գործող պետական բուհերի, ինչպես նաև Վանաձորի և Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտների ՈԻԳԸ-ների, Գևորգյան հոգևոր ճեմարանի, Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի հետ:

Զգալի աշխատանք է կատարվել միջազգային համագործակցության ընդլայնման և ԵՊՀ ուսանողներին միջազգային գիտաժողովներին մասնակից դարձնելու ուղղությամբ: 2012 թ. ապրիլի 9-13-ը ԵՊՀ ՈԻԳԸ նախագահը մասնակցել է Մոսկվայի պետական համալսարանի կողմից կազմակերպված «Լոմոնոսով-2012» միջազգային երիտասարդական գիտական համաժողովին և ԱՊՀ երկրների երիտասարդ գիտնականների խորհրդի համագումարի աշխատանքներին: Ստորագրվել են 5 երկկողմ և 1 եռակողմ համաձայնագրեր: ՈԻԳԸ անդամները մասնակցել են նաև արտերկրում և ՀՀ-ում տեղի ունեցած մի շարք միջազգային գիտաժողովների:

2011/2012 ուստարում ՈԻԳԸ-ն ծավալել է բեղուն հրատարակչական գործունեություն: Տպագրվել են գիտական հոդվածների 3 ժողովածու, գիտական 124 հոդված, զեկուցումների թեզիսների 1 ժողովածու:

Ուսանողական կազմակերպությունների աշխատանքներին մշտապես աջակցություն է ցուցաբերել ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժինը: Իրականացվել են բազմաբովանդակ միջոցառումներ, որոնք միտված են եղել զարգացնելու ուսանողական կազմակերպությունների կարողությունները, տարածելու տեղեկատվություն նրանց կողմից իրականացվող ծրագրերի մասին և այլն: Բաժնի և համապատասխան կառույցների հետ համատեղ իրականացված աշխատանքներից հարկ է առանձնացնել ուսանողների ամառային հանգստի կազմակերպումը Դիլիջանի ուսումնաարտադրական բազայում, ԵՊՀ ասպիրանտների հիմնախնդիրների հանդիպում-քննարկումների շարքը, ուսանողական ակտիվի համար Ծաղկաձորում եռօրյա արտագնա սեմինարները և այլն: Ուսանողների հետ տարվող աշխատանքներում ներառված են նաև ուսանողների տարբեր խնդիրների քննարկումներն ու ներկայացումը ռեկտորատին: Կազմակերպվել է նաև «Լավագույն ուսանող-2012» ավանդական մրցանակաբաշխությունը, ապահովվել է ԵՊՀ ջոկատի մասնակցությունը «Բազե-2012» ամենամյա երիտասարդական հավաքին:

2. Մշակույթի կենտրոն

Հաշվետու ուստարում ԵՊՀ մշակույթի կենտրոնը շարունակել է իրականացնել իր առջև դրված խնդիրները, որոնք են՝ համակարգել և գեղարվեստական բարձր չափանիշներով անցկացնել ԵՊՀ շրջանակներում և նրանից դուրս կազմակերպվող մշակութային միջոցառումները, ինչպես նաև համապատասխան աշխատանքներ իրականացնել համալսարանական ուսանողության մշակութային դաստիարակության ուղղությամբ:

Կենտրոնը հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպել է 21 միջոցառում, 15 կինոդիտում-քննարկում և «Մշակութային դաստիարակություն» ծրագրի շրջանակներում 4 ներկայացման դիտում-քննարկումներ:

Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1650-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակներում մշակույթի կենտրոնի «Համալսարանական» թատրոնատուղիան բեմադրել է նոր ներկայացում՝ Պ. Սևակի «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» վերնագրով:

Կենտրոնի իրականացրած աշխատանքներում առանձնանում են ավանդական բնույթ կրող մի շարք ծրագրեր, որոնց թվում են ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում կազմակերպված «ԵՊՀ մեծարման և առաջին կուրսեցիների երդման արարողությունը», որն այս անգամ նվիրված էր ՀՀ և ԼՂՀ անկախության 20-ամյակներին, Ուսանողի միջազգային օրվան նվիրված «Ուսանող» համերգ-մրցանակաբաշխությունը, ԵՊՀ ծննդյան 93-րդ տարեդարձին նվիրված «Լավագույն ուսանող» ամենամյա համերգ-մրցանակաբաշխության արարողությունը և Ֆրանկոֆոնիայի ծրագրերի շրջանակում ֆրանսիական երգերի փառատոնը:

ԵՊՀ ՈԻՀԱ ակումբը մասնակցել է ուսանողական լիգայի խաղերին՝ գրավելով 2-րդ տեղը (հոկտեմբեր-դեկտեմբեր 2011 թ.):

Կենտրոնն ակտիվորեն մասնակցել է նաև ԵՊՀ շրջանակներում անցկացված մի շարք միջոցառումների կազմակերպմանը: Ժուռնալիստիկայի ֆակուլտետի հետ իրականացվել է Հայաստանի գրողների միության նախագահ Լևոն Անանյանի ծննդյան 65-ամյակին նվիրված միջոցառումը: Ուսանողական խորհրդի և ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի հետ համատեղ կազմակերպվել են Հայոց բանակի կազմավորման և Շուշիի ազատագրման 20-ամյա հոբելյաններին նվիրված միջոցառումներ: Նշվել է ռոմանագեղմանական բանասիրության ֆակուլտետի հիմնադրման 20-ամյա հոբելյանը: Հոբելյանական միջոցառումների շարքում կատարվել են մի շարք այցելություններ Երևանի դպրոցներ:

Կենտրոնը մասնակցել է նաև հայոց գրատպության 500-ամյակին և Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակվելու կապակցությամբ Երևանի քաղաքապետարանի առջև գտնվող այգում կազմակերպված բացօթյա միջոցառմանը:

ԵՊՀ մշակույթի կենտրոնի կինոակումբի և Հայաստանի ազգային կինոկենտրոնի կողմից «Կինոաշուն» փառատոնի շրջանակներում յուրաքանչյուր չորեքշաբթի ցուցադրվել են հայկական ֆիլմեր, ինչպես նաև կազմակերպվել են ստեղծագործական անձնակազմերի հետ հանդիպում-քննարկումներ: Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի «Արևորդի» ծրագրի շրջանակներում կազմակերպվել են միջազգային բնապահպանական ֆիլմերի դիտում-քննարկումներ: Համալսարանականները դիտել են նաև «Ոսկե ծիրան» կինոփառատոնին մասնակցած ֆիլմեր, որոնք ցուցադրվել են իրենց բնագրով:

ԵՊՀ-ի և ՀՀ սփյուռքի նախարարության համագործակցության շրջանակում «Սփյուռքի ամառային դպրոց» ծրագրի ազգային երգի և պարի դասընթացները կազմակերպվել են մշակույթի կենտրոնի կողմից: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ համատեղ Գևորգյան հոգևոր ճեմարանում իրականացվել է Մբ. Վարդանանց տոնին նվիրված միջոցառում: Արարողությունն իր ներկայությամբ պատվել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համագործակցության արդյունքում ԵՊՀ մշակույթի կենտրոնը ակտիվորեն մասնակցել է «Մենք հայ ենք, մենք երիտասարդ ենք, մենք ուժեղ ենք» խորագրով մշակութային քարոզարշավին՝ համերգներով և թատերական ներկայացմամբ 3 օր հանդես գալով Արցախի տարբեր շրջաններում ու ՊԲ զորամասերում:

«Մշակութային դաստիարակություն» ծրագրով հաշվետու ժամանակաշրջանում ընդլայնվել են համագործակցության շրջանակները. ձեռք են բերվել համաձայնագրեր Մ. Մկրտչյանի անվան արտիստական թատրոնի, Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի, Համազգային թատրոնի, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ուսանողական թատրոնի հետ: Մշակույթի կենտրոնի դահլիճում կայացել է Գարի Քեսայանի ջազ քառյակի համերգը:

«Dasaran.am» կրթական ծրագրի հետ համատեղ կազմակերպվել են գրական մրցույթի մրցանակաբաշխության և Չ. Դիքենսի ծննդյան 200-ամյակին նվիրված միջոցառումներ: Կենտրոնը մասնակցել է ՌԴ դեսպանատան և Մոսկվայի տան կազմակերպած՝ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի օրվան նվիրված երգերի թատերականացված մրցույթին՝ ստանալով գլխավոր մրցանակ:

Հաշվետու տարում տպագրվել են երիտասարդ հեղինակների՝ ՀՀ և ԼՂՀ անկախության 20-ամյակներին նվիրված միջբուհական մրցույթի արդյունքում հաղթած և խրախուսական մրցանակների արժանացած ստեղծագործությունները («Քայլեր և արձագանք» գրքով):

3. Շրջանավարտների և կարիերայի կենտրոն

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը, շարունակելով աշխատանքային շուկայում ԵՊՀ ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը,

երիտասարդ մասնագետների զբաղվածության խնդիրների լուծման աջակցմանը, ինչպես նաև համալսարան-ձեռնարկություն կապի հաստատմանը նպաստող գործունեությունը, 2011/2012 ուստարվա ընթացքում մշակել և իրականացրել է մի շարք ծրագրեր և միջոցառումներ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

- պարբերաբար կազմակերպվող սեմինար-դասընթացներ, ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող հանդիպումներ,
- ինտերնշիփերի և ուսանողական պրակտիկայի, կամավորական աշխատանքների կազմակերպում,
- աշխատանք ձեռք բերելու հնարավորությունների ընձեռում:

Սեմինար-դասընթացների շարքում հարկ է նշել՝

- Կենտրոնի կողմից պարբերաբար իրականացվող «Ռեզյումե կազմելու սկզբունքները» խորագրով սեմինար-դասընթացների շարքը,
- «Օրանժ Արմենիա» ընկերության հետ համագործակցության շրջանակներում «Վաճառքի ուղղակի և անուղղակի մեթոդները» խորագրով սեմինար-դասընթացը,
- «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության աշխատակիցների կողմից իրականացված սեմինար-դասընթացները,
- «Ֆինանսաբանկային քոլեջ» հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում իրականացված «ՀՀ ֆինանսաբանկային համակարգում աշխատել ցանկացող անձանց իրազեկվածության բարձրացում» թեմայով սեմինարը,
- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ իրականացրած «Բուհ-աշխատաշուկա արդի կամուրջների հաստատում և փոխգործակցության ընդլայնում» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Երիտասարդական մասնակցությունը և արդի աշխատաշուկայում ինտեգրմանը խթանող գործոնները» խորագրով սեմինար-դասընթացների շարքը:

Կազմակերպված հանդիպումների շարքում հարկ է նշել «ՎՏԲ Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացուցիչների և «Հայաստանի ներգնա տուրօպերատորների միության» նախագահի հետ ուսանողների հանդիպում-քննարկումները: Կենտրոնը կազմակեր-

պել է նաև բազմաթիվ ինտերնշիփեր և պրակտիկաներ, մասնավորապես՝ 32 ուսանողի պրակտիկա «ՎիվաՍել-USU» ընկերության տարբեր բաժիններում, 10 ուսանողի ամառային պրակտիկա «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում, 12 ուսանողի պրակտիկա «Պրոկրեդիտ» բանկի «Երիտասարդ բանկիրներ» ծրագրի շրջանակներում, 7 ուսանողի պրակտիկա «Էյչ Էս Բի ՄԻ Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում, ինչպես նաև պրակտիկաներ «Այ Ի Բի» ՓԲԸ-ում և «Երիտասարդական նվաճումներ» ՀԿ-ի կողմից իրականացված ծրագրերում:

Ուսանողների կարիերայի զարգացման գործընթացում էապես կարևորվում է համագործակցությունը ՀՀ պետական և մասնավոր սեկտորի հետ: Այս համատեքստում հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել է «Երևանի պետական համալսարանի համագործակցությունը առաջատար ընկերությունների և գործատուների հետ» խորագրով հանրապետական կյոթ սեղան-քննարկում: Քննարկմանը ներկա են եղել ՀՀ պետական և մասնավոր սեկտորի ներկայացուցիչներ, ինչպես նաև ԵՊՀ տարբեր ֆակուլտետների դեկաններ և փոխդեկաններ: Հանդիպման ընթացքում ներկայացվել է «կորպորատիվ համալսարան» համագործակցության մոտեցումները, քննարկվել բուհ-ձեռնարկություն համագործակցության հնարավոր ուղիները: Շարունակելով նմանօրինակ հանդիպումների շարքը՝ «Բուհ-աշխատաշուկա արդի կամուրջների հաստատում և փոխգործակցության ընդլայնում» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է «Աշխատաշուկայի և բարձրագույն կրթության արդի փոխգործակցության խնդիրները» խորագրով գիտագործնական հանդիպում:

Ձեռնարկությունների ներկայացուցիչների հետ բազմաբովանդակ քննարկումների շնորհիվ ԵՊՀ-ի և շուրջ 10 տարբեր կազմակերպությունների միջև ստորագրվել են համագործակցության հուշագրեր:

Նպատակ ունենալով առավել արդյունավետ դարձնելու կենտրոնի աշխատանքները ուսանողների և շրջանավարտների հետ՝ մշակվել է կենտրոնի նոր ինտերնետային կայքը՝ www.career.yasu.am: Կենտրոնը մշակել է նաև ընթացիկ ուստարվա շրջանավարտների տվյալների շտեմարանը, որի միջոցով շրջանավարտները տեղեկացվում են իրականացվող միջոցառումների և ծրագրերի մասին:

Կենտրոնի աջակցությամբ ուսանողները և շրջանավարտները մասնակցել են տարբեր մրցույթների և հարցազրույցների, որոնց արդյունքում շուրջ 20 համալսարանական ընդունվել է աշխատանքի:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանում որոշակի աշխատանքներ են իրականացվել սոցիալական քաղաքականության ուղղությամբ: ԵՊՀ վարչակազմը և արհեստակցական կազմակերպությունն առավել ուշադրություն են դարձրել համալսարանի աշխատակիցների հանգստի, առողջության պահպանման, սոցիալական այլևայլ խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը: Այդ նպատակով արհեստակցական կազմակերպությունը սեփական միջոցներից, որպես օգնություն, համալսարանի 525 աշխատակցի, առանձին դեպքերում նաև սոցիալապես խիստ անապահով և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողների հատկացրել է 20.125.000 (քսան միլիոն հարյուր քսանհինգ հազար) դրամ:

Համալսարանի աշխատողների և ուսանողների 2500 երեխաների և թոռնիկների համար կազմակերպվել և իրականացվել են ամանորյա միջոցառումներ՝ հատկացնելով տոնական ներկայացման տոմսեր և նվերներ: 1710 կին աշխատակցի համար իրականացվել է Կանանց միջազգային օրվան՝ Մարտի 8-ին նվիրված համահամալսարանական միջոցառում: Ձեռք է բերվել և կոլեկտիվի անդամներին անվճար հատկացվել է թատերական տարբեր ներկայացումների 2430 տոմս:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել է աշխատակիցների, նրանց ընտանիքների անդամների և ուսանողների հանգիստը Ծաղկաձորի, Հանքավանի և Բյուրականի ուսումնաարտադրական բազաներում: Իրականացվել է հանգստանալու մեկնողների համար ուղեգրերի արժեքի մասնակի զեղչման անհատական մոտեցման համակարգ: Սոցիալապես առավել անապահով աշխատակիցների նկատմամբ կիրառվել է ուղեգրերի արժեքը 50 %-ով զեղչելու սկզբունքը: Հանքավանի և Բյուրականի ուսումնաարտադրական բազաների ծանրաբեռնվածությունը հուլիս-օգոստոս ամիսներին կազմել է իրական հնարավորության 30 %-ը, ինչը բազաների սանիտարական, նյութատեխնիկական ոչ բավարար վիճակի հետևանքն է: Հանքավանի ուսումնաարտադրական բազայում հուլիս-օգոստոս ամիսներին հանգստացել են համալսարանի 128 աշխատակից և ուսանող, որը կազմել է 1060 մարդ-օր, Բյուրականում՝ 113 (600 մարդ-օր): Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայում, որը, ի տարբերություն Հանքավանի և Բյուրականի ուսումնաարտադրական բազաների,

գործում է շուրջամյա, հանգստացել է մոտ 1000 մարդ (3221 մարդ-օր): Ընդհանուր առմամբ, համալսարանի երեք ուսումնաարտադրական բազաներում հաշվետու ժամանակահատվածում իրենց հանգիստն են կազմակերպել համալսարանի ավելի քան 1241 աշխատակից, նրանց ընտանիքների անդամներ և ուսանողներ (4881 մարդ-օր):

Դիլիջանի մարզաառողջարանային ճամբարը հաշվետու ուսումնական տարվա ընթացքում ԵՊՀ արհեստակցական կազմակերպության և ԵՊՀ ֆինանսական միջոցներով ու ԵՊՀ ուսանողական խորհրդի ջանքերով կրկին մասնակի բարեկարգվել է, որը հնարավորություն է տվել մոտ 350 ուսանողի՝ իրենց ամառային հանգիստը կազմակերպելու այնտեղ:

2011/2012 ուստարում ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը մի շարք ֆակուլտետների կոլեկտիվների համար արշավներ է կազմակերպել դեպի Հայաստանի տարբեր տեսարժան վայրեր: Մայիս-հունիս ամիսներին մեկօրյա արշավներ են կազմակերպել իրավագիտության (Հաղպատ, Սանահին, Դսեղ) ու ֆիզիկայի (Տաթև) ֆակուլտետների, իսկ երկօրյա՝ քիմիայի ֆակուլտետի (Տաթև, Գորիս) կոլեկտիվները:

2010 թվականի հունիսի 1-ից ԵՊՀ արհեստակցական կազմակերպության կողմից իրականացվող «Ծննդօգնություն համալսարանականներին» ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում համալսարանի 38 աշխատակցի ընդհանուր առմամբ հատկացվել է 1.968.000 (մեկ միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) դրամ գումար (22-ը՝ առաջին երեխայի համար, 14-ը՝ երկրորդի, 1-ը՝ երրորդի, 1-ը՝ առաջին գույգ երեխայի):

2011 թվականից ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունում գործում է անվճար իրավաբանական խորհրդատվության ծառայություն, որը հաշվետու տարում ԵՊՀ 112 աշխատակիցների տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն ոչ միայն աշխատանքային, այլև քաղաքացիաիրավական, ընտանեկան, վարչական և այլ իրավական խնդիրների վերաբերյալ:

2012 թ. մայիսի 18-ին ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունն իր 30 պատվիրակներով մասնակցել է ՀՀ բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության 3-րդ համագումարին:

2011/2012 ուստարվանից առավել ակտիվորեն սկսել է գործել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի արհբյուրոն: Պարբերաբար կազմակերպվում են տարբեր միջոցառումներ (օրինակ՝ ՀՀ անկախության 20-ամյակի, Ամանորի, Մարտի 8-ի առթիվ, շրջանավարտների դիպլոմների հանձնում և այլն):

2012 թ. ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը Facebook սոցիալական կայքում ստեղծել է իր էջը:

Հաշվետու ուստարում շարունակվել է ակտիվ համագործակցությունը ինչպես Հայաստանի պետական բուհերի արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության, Հայաստանի արհմիությունների հանրապետական կոնֆեդերացիայի, այնպես էլ Եվրասիական համալսարանների արհմիութենական կազմակերպությունների ասոցիացիայի և Արհմիությունների համընդհանուր կոնֆեդերացիայի հետ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանում էապես բարելավվել է համալսարանի նյութատեխնիկական բազան: Գնվել է կահույք (ուսանողական նստարաններ, սեղաններ, աթոռներ, պահարաններ, գրատախտակներ և այլն)՝ 28,8 մլն դրամի չափով, կենցաղային տեխնիկա (սառնարաններ, օդորակիչներ, փոշեկուլներ, հեռուստացույցներ, հեռախոսներ և այլն)՝ 17,5 մլն դրամի չափով, գրենական պիտույքներ՝ 15 մլն դրամի չափով: ԵՊՀ գրադարանը համալրվել է նոր գրքերով՝ 20,7 մլն դրամի չափով:

Ռադիոֆիզիկայի, աշխարհագրության և երկրաբանության, քիմիայի ֆակուլտետները համալրվել են արտասահմանյան նորագույն սարքերով (84 մլն դրամ):

Լայնածավալ աշխատանքներ են իրականացվել շենքերի ու շինությունների վերանորոգման ուղղությամբ: Ավարտվել են 7-րդ մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները: Նշված մասնաշենքի դահլիճի տանիքում կատարվել են լսարանների կառուցման աշխատանքներ, վերանորոգվել են 2-րդ հարկը, դահլիճը, ինչպես նաև 1-ին, 2-րդ, 3-րդ հարկերի սանհանգույցները և աստիճանավանդակները: Վերանորոգման

աշխատանքներ են տարվել նաև կենտրոնական և Կիևյան փողոցի մասնաշենքերում, քիմիայի, կենսաբանության ֆակուլտետներում:

ԵՊՀ ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի և գիտաճանաչողական էքսկուրսիաների կազմակերպման համար ավտոպարկն իրականացրել է 38 ուղերթ, ռազմահայրենասիրական և մշակութային միջոցառումների համար՝ 57 ուղերթ, արտասահմանյան հյուրերի սպասարկման և գիտաժողովների կազմակերպման համար՝ 120 ուղերթ:

Պահպանության ծառայության աշխատանքների արդյունավետության բարձրացման և տեսահսկման ցանցի ընդլայնման նպատակով տեղադրվել է 12 նոր տեսախցիկ, հսկիչներին տրամադրվել են ժամանակակից տեխնիկական միջոցներ, ծառայողական հագուստ, բարելավվել է համագործակցությունը ոստիկանության համապատասխան ստորաբաժանման հետ:

ԵՊՀ Ծաղկաձորի, Հանքավանի, Բյուրականի ուսումնաարտադրական բազաներում պատշաճ կերպով կազմակերպվել են համալսարանի աշխատակիցների և ուսանողների հանգստի, ինչպես նաև ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի աշխատանքները:

ԵՊՀ մասնաշենքերում հետևողական աշխատանքներ են կատարվել նաև սանիտարական մաքրության պահպանման առումով: Դրան օժանդակել են ձեռք բերված նոր, արդյունավետ սարքավորումները (2,5 մլն դրամի չափով): Համալսարանի կանաչ տարածքներում կատարվել են ծառերի խնամքի, կանաչապատման և ծաղկազարդման ծավալուն աշխատանքներ:

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի համար հաշվետու ժամանակաշրջանը եղել է զարգացման ռազմավարական ծրագրի շրջանակներում իրականացվող կրթական բարեփոխումների, կրթության որակի ապահովման և վերահսկման, ինքնավերլուծության, ենթակառուցվածքների աշխատանքների կատարելագործման տարի: Վերանայվել և վերահաստատվել են կրթական ծրագրերը:

Կրեդիտային համակարգով կրթական ծրագրերի թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով մասնաճյուղի ֆակուլտետների և մինչհամալսարանական կրթության և հեռակա ուսուցման բաժնի համար վերահրատարակվել են «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» տեղեկատվական փաթեթները:

Ավելի է կարևորվել ուսանողների գործնական և կիրառական հմտությունների զարգացումը: Այս տեսակետից՝ ուսումնական պլաններում ծանրաբեռնվածության կենտրոնը տեսականից տեղափոխվել է պրակտիկ կարողությունների զարգացում: Հետևողական աշխատանք է տարվել ուսումնական պլաններով նախատեսված պրակտիկաների համար համապատասխան բազաների ընտրության և տեղերում ուսանողների պրակտիկան ավելի նպատակային կազմակերպելու ուղղությամբ:

Հիմք ընդունելով ԵՊՀ-ում գործող կանոնակարգերը՝ մասնաճյուղում մշակվել և գիտական խորհրդի կողմից հաստատվել են ուսումնական նորացված կանոնակարգեր: Մշակվել և հաստատվել են նաև մասնաճյուղի գործունեության տարբեր ոլորտների աշխատանքների համակարգման վերաբերյալ ընթացակարգեր և կարգեր:

Մասնաճյուղի չորս ֆակուլտետներում, մինչհամալսարանական կրթության և հեռակա ուսուցման բաժնում հաշվետու տարում ուսանողների թիվը եղել է 1647, որից 253-ը՝ անվճար, 1394-ը՝ վճարովի ուսուցման համակարգերում:

Կրթօջախն իր առջև դրված նպատակների ու խնդիրների առաջընթացն ապահովող ուսանողամետ ռազմավարական ծրագրի (2011-2015 թթ.) իրականացման համար ձգտում է ապահովելու բավարար նյութատեխնիկական բազա, բարձր որակավորմամբ դասախոսական կազմ: Դասախոսական կազմը հիմնականում հրավիրված է Երևանի պետական համալսարանից և համալրված է գիտական կոչումներ ունեցող, մասնագիտական բարձր կարողությունների տեր տեղացի կադրերով:

Զգալի աշխատանքներ են տարվել մասնաճյուղի դասախոսական կազմի գիտական, ուսումնամեթոդական որակավորման բարձրացման ուղղությամբ: Մասնաճյուղի դասախոսներից մեկը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, երեքը՝ թեկնածուական: Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոսներից մեկը 2012 թ. մարտից դարձել է ՀՀ գրողների միության անդամ: Երիտասարդ դասախոսներից 9-ը գիտական խորհրդի կողմից երաշխավորություն է ստացել հայցորդ ձևա-

կերպվելու Երևանի պետական համալսարանի մասնագիտական ամբիոններում: Հիմնական դասախոսներն ընդգրկվել են կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման Բարձրագույն դասընթացներում:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղի դասախոսների կողմից հրատարակվել են 1 դասագիրք, 4 մենագրություն, 3 ուսումնական ձեռնարկ, 8 ուսումնամեթոդական ձեռնարկ, 93 հոդված, 6 զեկուցումների թեզիս: Հոդվածների զգալի մասը տպագրվել է մասնաճյուղի «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուում, որը ներառված է ԲՈՀ-ի ցուցակում: Բնական գիտությունների թեմաներով հոդվածները տպագրվել են «Ակունք»-ի հավելվածում: Ուսանողների ներկայացրած հոդվածները, գիտական ընթերցումների նյութերը հրատարակվել են մասնաճյուղի «Ուսանողական զեկուցումների շարք» հանդեսում:

Մասնաճյուղի համար հաշվետու ժամանակաշրջանը նշանակալից էր նաև հագեցված ծրագրերով անցկացված գիտաժողովներով, գիտական ընթերցումներով, հոբելյանական և նշանավոր տարեթվերին և օրերին նվիրված միջոցառումներով, որոնց ակտիվորեն մասնակցել են նաև ուսանողները:

Հատկանշական են գիտական-զեղարվեստական միջոցառումները՝ նվիրված Միսաք Մեծարենցին, Վահան Տերյանին, Պարույր Սևակին, Հրաչյա Աճառյանին, որոնք վերածվեցին բաց դասերի և քննարկումների: Օտար լեզուների ամբիոնի դասախոսները մասնակցել են ԵՊՀ-ում կայացած «Լեզուն, գրականությունը և արվեստը միջմշակութային համատեքստում» խորագրով երրորդ միջազգային գիտաժողովին, որտեղ հանդես են եկել զեկուցումներով: Ամբիոնի ֆրանսերենի դասախոսները մասնակցել են Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի ֆրանսերենի ամբիոնի հիմնադրման 75-ամյակին նվիրված 4-րդ միջազգային գիտաժողովին՝ «Աշխարհի լեզվական հայելին» խորագրով, հանդես են եկել զեկուցումներով:

Տնտեսագիտության ֆակուլտետի դասախոսների և ուսանողների ուժերով կազմակերպվել են մարզի հիմնախնդիրների, տնտեսական զարգացման հեռանկարների, տուրիզմի զարգացման և այլ հարցերին նվիրված գիտական ընթերցումներ:

Ուսանողական կազմակերպությունների նախաձեռնությամբ Մեծ եղեռնի օրվան նվիրված ցուցադրվել է «Ոտքի՛, դատարանն է գալիս» ներկայացումը, կազմակերպվել են ուսանողների ինտելեկտուալ մրցումներ, միջոցառումներ՝ նվիրված նոր

ուսումնական տարվան, ուսանողության օրվան, տարեմուտին, ինչպես նաև «Ոսկե աշուն», «Ուսանողական գարուն»:

Մասնաճյուղի ռազմավարական խնդիրներից են համագործակցությունը տարածաշրջանային և միջազգային նշանակություն ունեցող համալսարանների և քոլեջների, կրթական և գիտական կազմակերպությունների հետ, ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի փոխանակման ծրագրերի, արտասահմանյան բուհերում վերապատրաստման կազմակերպումը: Իր գործունեության ընթացքում ԵՊՀ ԻՄ-ն համագործակցության առաջարկի արձագանքներ է ստացել ՀՀ-ում ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Իտալայի դեսպանատներից: Միջազգային համագործակցության ասպարեզում մեծ ներդրում ունեցավ «Ֆրանս-հայկական բարեկամություն» ասոցիացիան:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի և ԳՌԵՖ-ի ((GREF) Թոշակառու մանկավարժներն առանց սահմանների) ֆրանսիական հասարակական-կրթական կազմակերպության միջև կնքվել է կրթական համագործակցության պայմանագիր: Նպատակն է համագործակցել ինչպես ֆրանսերենի ուսուցման բնագավառում, այնպես էլ դասավանդողների և վերապատրաստողների վերապատրաստմանը՝ Ֆրանկոֆոնիայի շրջանակներում: 2011/2012 ուստարվա ընթացքում ԳՌԵՖ-ի ներկայացուցիչներն իրականացրին իրենց զարնանային առաքելությունը՝ մանկավարժական վերապատրաստում համալսարանում:

Կազմակերպվել է հանդիպում Ֆրանսիայի Վալանս քաղաքի տեխնոլոգիական համալսարանի ներկայացուցիչների հետ, և երկու բուհերի միջև կնքվել է փոխհամագործակցության պայմանագիր:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ ԻՄ-ում մեծ ուշադրություն է դարձվել կուուպցիոն ռիսկերի երևույթների կանխմանը: ՀՀ ԿԳՆ «Կրթական համակարգում կուուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թթ. համալիր գործողությունների ծրագրի» պահանջների համաձայն՝ կազմվել և գործողության մեջ է դրվել հակակուուպցիոն ծրագիր, որի մասին իրազեկվել է ուսանողներին և դասախոսներին: Ծրագրի շրջանակներում բոլոր քննություններն իրականացվում են գրավոր և հանձնաժողովներով, որոնցում ընդգրկված են տնօրենության, դեկանատների, ամբիոնների և ուսանողական խորհրդի, կրթության որակի վերահսկման հանձնաժողովի անդամ-

ներ: Քննությունները կազմակերպվում են բաց և թափանցիկ: Ներդրվել է նաև ուսանողների բողոքարկման կարգ: Նման համակարգը, երբ բոլորի գնահատականները բաց քննարկվում են ուսանողների հետ և նոր գրանցում տեղեկագրերում, հանգեցրել է դրական արդյունքների: Յուրաքանչյուր քննաշրջանի ավարտից հետո, ուսումնական աշխատանքները համակարգողների և ուսխորհրդի ներկայացուցիչների հետ համատեղ, իրականացվում է բոլոր դասախոսների անանուն գնահատում ուսանողների կողմից, կատարվում՝ վերլուծություններ, քննարկումներ:

Մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի շրջանակներում գիտական խորհրդի որոշմամբ կատարվել են կառուցվածքային փոփոխություններ՝ միաված ուսումնամեթոդական, կրթության որակի աշխատանքների բարելավմանը:

Ուսումնամեթոդական բաժինը վերակազմավորվել և դարձել է ուսումնամեթոդական վարչություն՝ իր երկու բաժիններով՝ ուսումնական գործընթացի պլանավորման և ծրագրամեթոդական աշխատանքների ու կրթական որակի ապահովման և գնահատման:

Մինչհամալսարանական կրթության և հեռակա ուսուցման բաժինն իր գործունեության մեջ հավասարապես կարևորել է թե՛ համալսարանական և թե՛ մինչհամալսարանական ուղղությունները, որի արդյունքում զգալիորեն մեծացել է բաժնի աշխատանքի ծավալը: Բաժնի գործունեության արդյունավետությունը մեծացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ այն վերակազմավորվել է երկու բաժնի՝ հեռակա ուսուցման և մինչհամալսարանական կրթության և մասնագիտական կողմնորոշման:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղի ռազմավարական ծրագրի իրականացման էական ձեռքբերում պետք է համարել «Կիրառական արվեստ» մասնագիտության գծով առկա ուսուցմամբ մագիստրոսական ծրագրի բացումը, որով շնորհալի շրջանավարտների համար հնարավորություն ստեղծվեց ստանալու մասնագիտական շարունակական կրթություն:

Կիրառական արվեստի ֆակուլտետը հաջողությամբ իրականացնում է ժողովրդական հին ու նոր արհեստների զարգացման, դրանք արվեստի աստիճանին մոտեցնելու և կիրառելի դարձնելու խնդիրը:

Շրջանավարտների աշխատանքի տեղավորման խնդիրը մասնաճյուղի ռազմավարական ծրագրի կարևորագույն խնդիրներից է: Այդ ուղղությամբ զգալի աշխա-

տանք է տանում մասնաճյուղի շրջանավարտների և կարիերայի կենտրոնը, որի գործունեության հիմնական նպատակն է նպաստել մարզի և հանրապետության այլ բնակավայրերի աշխատանքային շուկայում մասնաճյուղի ուսանողների և շրջանավարտների առավել մրցունակ դառնալուն, ամրապնդել շրջանավարտների և մասնաճյուղի միջև մշտական կապն ու համագործակցությունը: Կենտրոնը նաև օժանդակում է մասնաճյուղի շրջանավարտներին և ուսանողներին՝ ճիշտ կողմնորոշվելու աշխատաշուկայում: Կենտրոնը համագործակցում է բազմաթիվ տեղական կազմակերպությունների և գործատուների, ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, Տավուշի մարզպետարանի կրթության վարչության հետ, պարբերաբար կատարում է տեղեկատվության և գործառույթների առաջավոր փորձի փոխանակում:

Կենտրոնը 2011/2012 ուստարվա բոլոր շրջանավարտներին ավարտական քննություններից հետո բաժանել է շրջանավարտի գրանցման թերթիկներ, որպեսզի նրանց պարբերաբար տեղյակ պահի թափուր աշխատատեղերի, վերապատրաստման դասընթացների, կրթական և այլ ծրագրերի մասին: Միաժամանակ, առաջարկվել է գրանցման թերթիկում օբյեկտիվորեն ներկայացնել իրենց կարծիքներն ու առաջարկները մասնաճյուղի ուսումնական և այլ գործընթացների վերաբերյալ:

Մարզի տեղական ինքնակառավարման մարմիններում, բանկային և հարկային համակարգում, դպրոցներում և այլ բնագավառներում մրցութային կարգով ընտրվել և հաջողությամբ աշխատում են մասնաճյուղի բազմաթիվ շրջանավարտներ:

Մարզի դպրոցներում մանկավարժական աշխատանքի անցնելուն մեծապես նպաստեց ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մասնաճյուղի «010500-կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության կրթական ծրագրում փոփոխություններ կատարելու և ծրագրի շրջանավարտներին ուսուցչի որակավորում շնորհելու թույլտվությունը:

Հեռակա ուսուցման բաժնի շրջանավարտների մեծ մասը, հաջողությամբ համատեղելով ուսումը աշխատանքի հետ, բարձրագույն կրթություն ստանալով, ապահովեցին իրենց մրցունակությունը աշխատատեղերում:

Հաշվետու ժամանակաշրջանում զգալի աշխատանք է կատարվել մասնաճյուղի նյութատեխնիկական բազայի բարելավման ուղղությամբ: Փոխվել, նորացվել է Ուսանողական 3 հասցեի մասնաշենքերի ամբողջ տանիքը, հիմնովին վերանորոգվել են

արխիվի սենյակները, փոխվել են կիրառական արվեստի և բնական գիտությունների ֆակուլտետների մասնաշենքերի պատուհանները, վերանորոգվել են 3 արվեստանոցները և երեք լսարանները, նորացվել է գույքը:

Համամասնաճյուղային համակարգչային կենտրոնի նորացված հարմարավետ սրահները հազեցվել են ժամանակակից համակարգիչներով, պրոյեկտորներով: Բնական գիտությունների ֆակուլտետի ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով համամասնաճյուղային համակարգչային կենտրոնի սրահներից մեկը դարձվել է մասնագիտական համակարգչային լաբորատորիա:

Տնտեսագիտական ֆակուլտետում ստեղծվել է օնլայն լսարան, աշխատանքներ են տարվում բոլոր մասնագիտությունների համար ստեղծելու առցանց լսարաններ:

Ընդլայնվել է գրադարանը՝ ընդարձակ ընթերցասրահով: Ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան կատարվել է շուրջ 700 անուն գրականության ֆոնդի համալրում, հարստացվել էլեկտրոնային գրադարանը: Դասավանդվող առարկաների վերաբերյալ դասախոսության նյութերը մասնաճյուղի ամբիոններում նախապատրաստվել և գրադարանին են տրվել տպագրված և էլեկտրոնային տարբերակով:

Կատարելագործվել է մասնաճյուղի համացանցային կայքը, ընդլայնվել է համակարգչային ներքին ցանցը, որը նպաստում է գործավարության էլեկտրոնային կազմակերպմանը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենությունը մեծ հոգածությամբ է վերաբերվում Երևանից ժամանող դասախոսների կենցաղային պայամաններին, նրանց համար ստեղծում ապրելու և աշխատելու լավագույն հնարավորություններ: Մասնաճյուղի հյուրանոցային համալիրում կառուցվել են աշխատանքի և հանգստի հարմարավետ նոր սենյակներ:

Լուրջ ուշադրություն է դարձվել աշխատակիցների և ուսանողների, սոցիալական վիճակի, հանգստի և առողջության խնդիրներին: Խիստ կարիքավորներին (շուրջ 70 աշխատակիցների) հատկացվել է որոշակի նյութական օգնություն:

Առաջադիմության արդյունքներով՝ նպաստ է տրվել 157 ուսանողի, բարձր առաջադիմության և հասարակական ակտիվություն ցուցաբերած 137 ուսանողի հատ-

կացվել է նաև կրթաթոշակ, իսկ վճարովի համակարգի 112 ուսանողի՝ ուսման վարձի զեղչեր:

* * *

Ամփոփելով Երևանի պետական համալսարանի 2011/2012 ուսումնական տարվա գործունեությունը՝ վերստին նշենք, որ այն կազմակերպվել և իրականացվել է ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանին համապատասխան և բոլոր ուղղություններով միտված է եղել մայր կրթօջախի զարգացմանը, ներպետական և միջազգային գիտակրթական ասպարեզում նրա դերի և հեղինակության բարձրացմանը: Ձեռքբերումները և հաջողություններն զգալի են բոլոր բնագավառներում: Այդուհանդերձ, առկա են նաև թերացումներ և բացթողումներ, որոնք անհրաժեշտ է շտկել, վերացնել: Ցուրաքանչյուր համալսարանական՝ ուսանող թե դասախոս, գիտաշխատող թե սպասարկող, պետք է առաջնորդվի այն գիտակցումով, որ գործի հանդեպ իր վերաբերմունքից են կախված մայր համալսարանի հաջողությունները, առաջընթացը, վարկանիշը: Մեզնից յուրաքանչյուրի խնդիրն է ոչ միայն ձգտել նոր հաջողության, այլև փորձել այդ ճանապարհին վերացնել բացերն ու խոչընդոտները: Սա նաև ընդհանուր նպատակի՝ մայր համալսարանի առաքելությունը պատվով իրագործելու կարևորություն ունի:

**ԵՊՀ 2010-2014 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
2011/2012 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ**

ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով 2011/2012 ուստարում նախատեսված էր իրագործել մի շարք խնդիրներ, որոնք նպատակաուղղված են ԵՊՀ-ում բարձրորակ կրթության ապահովմանը, հանրային ներգրավման և ծառայությունների զարգացմանը, որակյալ կադրային ներուժի կատարելագործմանը, որակյալ ծառայությունների տրամադրմանը, ընդունելության բազմազանեցված մուտքի ընդլայնմանը և համապատասխանությանը, ֆինանսական կայունությանն ու կառավարման արդյունավետության բարձրացմանը, ռազմավարական գործակցության ամրապնդմանն ու գործունեության միջազգայնացման խթանմանը:

Ստորև ներկայացվում է այդ խնդիրների իրականացման առաջընթացը՝ համապատասխան գործողությունների և միջոցառումների կատարողականով:

Ռազմավարական նպատակ I-ի Խնդիր I. ա)-ով նախատեսված էր *Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ արդի միջազգային ծրագրային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջմունքներին համահունչ:* Այս խնդրի իրագործման նպատակով՝

- Սահմանվել են ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի պրոֆիլը և կրթական վերջնարդյունքների լրակազմը՝ չափելի գիտելիքների, կարողությունների և հմտությունների տեսքով, իսկ դրանց դասավանդման, ուսումնառության և գնահատման համար՝ համապատասխան մեթոդներ և չափանիշներ: Մշակվել են կրթական վերջնարդյունքների վրա հիմնված ուսումնական ծրագրերի մասնագրերը (սպեցիֆիկացիաները) և կազմվել ուսանողի տեղեկագրքերը:
- Մեկնարկել և ընթացքի մեջ է ԵՊՀ շրջանավարտներից հիմնական գործատու

կազմակերպությունների և մասնագիտական ընկերակցությունների բավարարվածության վերաբերյալ ուսումնասիրությունը՝ ծրագրերի արդիականացման և շրջանավարտների աշխատանքի անցնելու կարողությունների բարձրացման երաշխավորությունների մշակման նպատակով:

Խնդիր I. ք)-ով նախատեսված էր *Ներդնել որակի ներքին հավաստման համակարգ՝ եվրոպական չափորոշիչների պահանջներին համապատասխան*, որի իրագործման նպատակով կատարվել են հետևյալ գործողությունները.

- Մշակվել և ընդունվել է ԵՊՀ որակի ներքին ապահովման համակարգի նոր հայեցակարգը՝ որակի շարունակական բարելավման ռազմավարության, համապատասխան ընթացակարգերի, կազմակերպական կառուցվածքի ընդգրկմամբ և ԵՊՀ կառավարման կառույցների ու կառուցվածքային միավորների հետ փոխգործակցության և գործառույթների սահմանմամբ: Ստեղծվել է ԵՊՀ որակի ապահովման կենտրոնը, ԵՊՀ ԳԽ-ի կողմից ընդունվել է կենտրոնի կանոնադրությունը: Միաժամանակ ստեղծվել են ԳԽ-ի ՈԱ մշտական հանձնաժողովը և ֆակուլտետների ԳԽ-ների ՈԱ հանձնաժողովները, որտեղ ընդգրկվել են նաև ուսանողների ներկայացուցիչներ:
- Մշակվել են համալսարանի գործունեության հիմնական ոլորտների ինքնագնահատման չափանիշները՝ հիմք ընդունելով միջազգային հավատարմագրող կազմակերպությունների և ՄԿՈԱԱԿ¹-ի որդեգրած և ՀՀ կառավարության կողմից հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշները և չափորոշիչները:
- Ստեղծվել և ընդունվել են ուսումնական ծրագրերի մշակման, արտոնման, ներքին փորձաքննության, հաստատման, տարեկան մոնիթորինգի և պարբերական վերանայման ներքին չափանիշներ, ընթացակարգեր և կարգեր:
- Ստեղծվել և հրապարակվել են չափանիշներ, կանոնակարգեր և ընթացակարգեր՝ ուսանողների ուսումնառության արդյունքների օբյեկտիվ գնահատման համար՝ ներառյալ վերանայման և բողոքարկման

¹ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն:

մեխանիզմները, ապահովվել են դրանց հրապարակայնությունն ու հետևողական կիրառումը:

- Մշակվել է կրթական ծրագրերի և ուսումնական գործընթացի արդյունավետ կառավարման համար պահանջվող ներքին տեղեկատվության լրակազմը:

Միաժամանակ, վերոնշյալ խնդրի իրականացման նպատակով՝

- Մեկնարկել և ընթանում են դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների գնահատման համար մեխանիզմների և չափանիշների ստեղծմանը և հրապարակմանն ուղղված գործընթացները:

Խնդիր I. դ)-ով նախատեսված էր *Ստեղծել նպաստավոր պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար:* Այս խնդրի իրագործման նպատակով մեկնարկել և ընթացքի մեջ է հետևյալ գործողությունը՝

- Դասավանդման որակի շարունակական բարելավման նպատակով մշակվում է ամենամյա գնահատման մոդել, որտեղ գնահատման ցուցանիշներում որպես բաղկացուցիչ կառուցամասեր ուսանողական հարցումների արդյունքների հետ մեկտեղ ներառվելու են նաև դասախոսի ինքնագնահատումը, ինչպես նաև ուսումնական ստորաբաժանման ղեկավարի (ամբիոնի վարիչի) և մասնագետ գործընկերների գնահատումները: Նախատեսված է դասավանդման բարելավմանն ուղղված աշխատանքները խրախուսելու նպատակով ամենամյա գնահատման արդյունքները համակցել դասախոսական կազմի առաջընթացի և խրախուսման (պարգևատրման) գործող համակարգերին:

Ռազմավարական նպատակ III-ի Խնդիր III. ա)-ով նախատեսված էր *Ապահովել հասարակության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային ծրագրերում Համալսարանի առավելագույնս ներգրավումը,* որի պատշաճ իրականացման համար՝

- Կատարելագործվել է Համալսարանի ինտերնետային կայքը, բարելավվել են նրա լրատվական ապահովումը, տեխնիկական վիճակը և շահագործման

արդյունավետությունը:

Խնդիր III. ք)-ով նախատեսված էր *Ձարգացնել հարատև ուսումնառության համակարգը Համալսարանում՝ սոցիալական պատվերին համապատասխան:* Այս խնդրի իրագործման նպատակով կատարված գործողություններն են՝

- Մշակվել է հարատև կրթության նոր հայեցակարգի նախագիծ, որն ուղղված է անձի կրթական պահանջմունքների լիարժեք բավարարմանը: Նախագծում հարատև ուսումնառությունը սահմանվել է որպես բուհական կրթության համակարգի կարևոր բաղադրիչ՝ ապահովելով անձի կրթական հնարավորությունների ու ձևերի բազմազանությունը:
- Բազմազանեցվել են ԵՊՀ հարատև կրթության ծրագրերը, ինչը նախատեսված է նոր հայեցակարգի նախագծով, իսկ իրականացվող ծրագրերում հայեցակարգի դրույթները գործնական կիրառություն են գտնում:

Միժամանակ՝

- Մեկնարկել և ընթացքի մեջ է մեր երկրում հարատև կրթության պահանջարկի ուսումնասիրությունը, որի արդյունքներն իրենց տեղը կգտնեն հայեցակարգի վերջնական տարբերակում:

Ռազմավարական նպատակ IV-ի Խնդիր IV. ա)-ով նախատեսված էր *Համայրել և բարելավել դասախոսական կազմը՝ որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան:* Այս խնդրի իրագործման նպատակով

- Մշակվել և արդեն մեկնարկել է կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը, որը բաղկացած է երկու հիմնական կառուցամասից՝ կրթական և հետազոտական-մեթոդական: Նշված ծրագրով դասախոսների վերապատրաստումը կազմակերպվում է հետևյալ ուղղություններով՝
 - ակադեմիական միջավայրում անզլերենով հաղորդակցվելու հմտության ձեռքբերում,

- տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետում և դրանք ուսումնական գործընթացում կիրառելու կարողություն,
- դասավանդման, ուսումնառության ու գնահատման ժամանակակից մեթոդներին տիրապետում, մանկավարժական-հոգեբանական անհրաժեշտ հմտությունների ձեռքբերում:

2011/2012 ուստարում ծրագրում ընդգրկված դասախոսներից 65-ը միջազգային հավաստագիր է ստացել՝ անգլերենի իմացության B և C մակարդակներում, կազմակերպվել է տեղեկատվական տեխնոլոգիաների 4 դասընթաց, բացվել է Բաումանի անվան համալսարանի հեռավար ուսուցման կետ, որի շնորհիվ դասախոսները յուրացնում են նաև էլեկտրոնային դասընթացներ մշակելու և իրականացնելու հմտություններ:

- ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման նոր կարգով պայմանավորված՝ մեկնարկել և ընթացքի մեջ է կրթական ծրագրերի կադրային ապահովվածությունը գնահատող չափանիշների և մեխանիզմների մշակման գործընթացը:

Խնդիր VI. ա)-ով նախատեսված էր *Բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ԵՊՀ-ում իրենց ուսումնառությունից և օժանդակ ուսանողական ծառայություններից:* Այս խնդրի իրագործման համար կատարվում են համապատասխան աշխատանքներ: Մասնավորապես՝

- Ձեռնարկվել և ընթացքի մեջ է ԵՊՀ շրջանավարտների գործնական պատրաստականության բարելավման նպատակով հիմնական գործատու կազմակերպություններում հարցումների իրականացման գործընթացը:
- Շրջանավարտների շրջանում իրականացվում են բավարարվածության հարցումներ՝ այդ թվում նաև աշխատաշուկայում պահանջարկված գործնական հմտությունների ձևավորումը կրթական ծրագրերում ապահովելու նպատակով:

Խնդիր VI. բ)-ով նախատեսված էր *Զարգացնել Համալսարանի տեղեկատվական ռեսուրսները ժամանակակից չափանիշներին համապատասխան, ապահովել դրանց*

արդյունավետ օգտագործումն ու մատչելիությունը: Այս խնդրի իրականացման համար՝

- Բարելավվել է ուսանողների և գիտամանկավարժական կազմի մասնակցության աստիճանը տեղեկատվական ռեսուրսների պլանավորման և զարգացման գործընթացներում:

Մինևույն ժամանակ՝

- Դեռևս չի ստեղծվել ԵՊՀ գրադարանային խորհուրդը՝ գրադարանի և Համալսարանի հիմնական ուսումնական և գիտական ստորաբաժանումների փոխադարձ կապն ու արդյունավետ համագործակցությունն ապահովելու նպատակով:

Խնդիր VII. բ)-ով նախատեսված էր *Համապատասխանեցնել Համալսարանի ընդունելության կառուցվածքը և չափաքանակները աշխատաշուկայի և դիմորդների համադրված կարիքներին*, որի պատշաճ իրականացման համար՝

- ԵՊՀ-ն զարգացրել է ընդունելության պլանավորումն ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և մասնագիտությունների՝ ելնելով Համալսարանի արտաքին միջավայրի վերլուծության, մասնագիտական աշխատաշուկայի պահանջմունքների և միտումների, պոտենցիալ դիմորդների նախասիրությունների ու կրթական կարիքների, արտաքին բարենպաստ հնարավորությունների ու ներքին չօգտագործված կարողությունների բացահայտման ու գնահատման արդյունքներից: Այսպես՝ 2012/2013 ուստարվա բակալավրիատի առկա ուսուցմամբ ընդունելություն կազմակերպվեց «Կովկասագիտություն», «Եկեղեցաբանություն», «Մաթեմատիկա, համակարգչային գիտություններ», «Հունարեն լեզու և գրականություն», «Թարգմանչական գործիսպաներեն և հայերեն լեզուներ» նոր մասնագիտությունների գծով: Ամեն տարի վերանայվում է նաև մագիստրոսական ծրագրերի ցանկը:

Խնդիր VII. գ)-ով նախատեսված էր *Մեծացնել օտարերկրյա ուսանողների համակազմը Համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում՝ ներդնելով հավաքագրման և ուսուցման կազմակերպման համալիր միջոցառումներ:* Այս

խնդրի իրագործմանն նպատակով՝

